ԱԼԻՔ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թիֆլիս	Ռուսաստան	Արտասահման
Տարեկան 6 ր.	Տարեկան 7 ր.	Տարեկան 32 ֆր.
½ տարին 3 ր.	½ տարին 3 ր. 50 կ.	½ տարին 16 ֆր.
Ամսական 60 կ.	Ամսական 70 կ.	Ամսական 3 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վճարն է առաջին երեսում իւրաքանչիւր տողին 6 կոպէկ, իսկ վերջին երեսում 3 կոպէկ։
Մեծ և տևողական յայտարարութիւններ առանձին պայմանով։

Խմբագրութիւնը բաց է 10—3 ժ. և երեկոյեան 6—8 ժ., իսկ կիրակի և տօն օրերին ցերեկ 12—2 ժ.։

Խմբագրութեան հասցէն. Թիֆլիս, Ֆրէյլինսկայա փող. № 6. Тифлисъ. Редакція „Аликъ“, Фрейлинская, № 6. կամ Rédaction „Alik“ Tiflis (Russie).

Հեռախօս № 90

№ 3 ՇԱԲԱԹ 29 ԱՊՐԻԼԻ 1906 Թ. — ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ — 1906 Թ. ԱՊՐԻԼԻ 29 ՇԱԲԱԹ № 3

„ԱԼԻՔ“-ի առանձին համարն արժէ 3 կոպէկ.

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱԼԻՔ“

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թիֆլիսում տարեկան 6 ր., ամսական 60 կոպ.։ Թիֆլիսից դուրս՝ տարեկան 7 ր., ամսական 70 կոպ.։ Արտասահմանում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.։
Դիմել՝ Тифлисъ редакція «Аликъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Alik».
Խմբագրատունը գտնւում է Թիֆլիսում, Ֆրէյլինսկայա փողոց № 6.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ, ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ պատիւ ունի յայտնել, որ կիրակի օրը, ապրիլի, 30-ին, կատարւելու են ս. Ստեփաննոսի կուսանաց անապատի եկեղեցում ս. պատարագ և հոգեհանգիստ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ

մահւան 18-րդ տարեդարձի օրը։ Հոգեհանգստի սկիզբն է 12 ժամին ցերեկայ։
164. 2—1

Վարդգէսի և Եփրեմ Ծատուրեանները իրենց որդոց հետ, Աննա Ծատուրեան և Մնացական Նալբանդեան յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ կիրակի ապրիլի 30-ին, ժամի 11½ Մողնու ս. Գէորգ եկեղեցում կը կատարւի

ՀՌԻՓՍԻՄԷ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

167 Քառասունքի հոգեհանգիստը։ Պատարագի սկիզբն է ժամի 10½-ին 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Չորեքշաբթի, մայիսի 3-ին

Հայ թատերասէրների խումբը, բարեհաճ մասնակցութեամբ ՏԻԿԻՆ ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ

տ. Զարէլի, օր. Զմշկեանի, պ.պ. Վանշիրի, Շիրինեանի և ուրիշների—կը ներկայացնեն

«ՊԱՏԻՒ»

Դրամա 4 գործ. հեղինակութիւն Շիրվանզադէի։ Ներկայացումից յետոյ համերգային բաժին

Սկիզբն է երեկոյեան 8 ժամին

Տոմսակների գները—3 ր. 15 կոպէկից մինչև 75 կ.։ Տոմսեր կարելի է ստանալ վաղօրօք ժողովարանի շվէյցարի մօտ։
Տոմսակները չեն կորցնում իրենց նշանակութիւնը։

Բ Ժ Ի Շ Կ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների։ Ընդունելութիւն 12—1 ժ. առ. և 5—6 ժ. երեկ.

Միխայլովսկի պր. տ. Ճաւճաւաձէի, 36.

(և. հ. շ.) 3—47

Թիֆլիս, 28 ապրիլ

ՋԻՋԱՌՄՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ Կոմս Վիտտէն ասպարէզ եկաւ իբր Ռուսաստանի բաղդի ղեկավար, ռուս-ճապօնական խայտառակ պատերազմից յետոյ, երբ ռուսական ազատագրական շարժման էւօլիւցիան արդէն խիստ առաջ էր գնացել և համաշխարհային պատմութեան բեմի վրայ արդէն սկսել էր խաղացւել ռուսական յեղափոխութեան առաջին գործողութիւնը։

Ամերիկայից նոր վերադարձած, կոմս Վիտտէն, կարծես ուզում էր խելացի կերպով ըմբռնել ու բացատրել իր հայրենիքի պարտութեան, նրա թուլութեան, նրա խաւարի ու աղքատութեան պատճառը. կարծես նա ուզում էր վերացնել այն միահեծան բիւրօկրատական կարգը, որը Ռուսաստանի համայն չարիքների միակ աղբիւրն է։ Այո, կարծես նա, ուզում էր սկզբում անկեղծաբար ներմուծել մեր երկիրը սահմանադրական իրաւակարգ, որի պահանջն այնքան հասունացած էր և է ժողովրդի մէջ։

Բայց սկզբից, առաջին քայլերից և եթ գործը դրւեց կեղծ հողի վրայ։ Սկզբից և եթ կամեց ուզեց հաշտեցնել իրար հետ սահմանադրական և ինքնակալական կարգերը։

Երեւաց հոկտեմբերի 17-ի մանիֆէստը։ Տւեցին ազատութիւններ՝ թղթի վրայ։ Ժողովուրդը կամեցաւ իսկոյն գործադրել իր նոր իրաւունքները։ Բայց սկսեցին ջարդերը և կոտորածները։ Կոտորեցին հրէաներին, կոտորեցին ինտելլիգենտներին։ Ծայրագաւառներից մի քանիսում—Կովկաս, Բալտեան նահանգներ,—ջարդերը հասան հրէշաւոր չափերի։

«Ազատութիւնը», որ տւել էր հոկտ. 17-ի մանիֆէստը, դարձաւ խառնակութիւն, ապստամբութիւն։ Եւ այդ «խառնակութիւնները» զսպելու համար, ամեն կողմ սկսեց պատերազմական դրութիւն, ռազմական դիկտատուրա, արտակարգ և ուժեղացրած պաշտպանութեան վիճակ։

Վիտտէն գտաւ իր ալտեր-էգօն, իր լրացուցիչը—Դուրնովոյին, մի անխիղճ, դաժան պոլիցիստ, մի Պլեվէ, բայց իր գործողութիւնների համար աւելի նպաստաւոր պայմաններում։

Վիտտէն և Դուրնովոն յաճախ ներկայանում էին իբր Յանուսի երկու երեսները. մէկն ազատութեան մասին էր ճառում, միւսը գաղտնի հեռագրներով հրամայում էր արեան մէջ խեղդել ամեն մի ազատագրման փորձ, ամեն մի ցոյց։

Եթէ նոյնիսկ մի վայրկեան հաւատանք գահավէժ նախարարապետի այժմեան խօսքերին և ենթադրենք, որ ինքն անկեղծօրէն ցանկացել է տալ Ռուսաստանին մի նոր իրաւակարգ, այն ժամանակ էլ մի այլ բան է բացւում. նա այնքան զիջումներ, այնքան կոմպրոմիսներ է արել հին, բիւրօկրատական միահեծանութեանը, որ իր սկզբնական ձգտումն այլասերւել, դարձել է իր հակառակը, իր անտիպօդը։

Նա ասպարէզ իջաւ իբր սահմանադրական կարգերի պաշտպան, մայր մտաւ, գահավիժւեց իբր բռնապետ, տանելով հետը ժողովրդի անէծքը ու ատելութեան տարափները։

Հոկտեմբեր 17-ին թղթի վրայ խոստացւեց մամուլի և խօսքի ազատութիւն։ Դա նոր իրաւակարգի անհրաժեշտ պայմանն է։ Բայց ահա՝ Վիտտէն զիջեց բիւրօկրատիզմի հին ձգտումներին.— փակւած լրագրների և ձերբակալւած հրապարակախօսների թիւն անհամար է, շարքն անհուն։

Խոստացւեց անձի անձեռնմխելիութիւն, բայց բոլոր դիմացիր «ծայրայեղներին» և նոյն իսկ չափաւոր արմատականներին տասնեակ հազարներով աքսոր քշեցին։ Վիտտէն խոստանում էր անձեռնմխելիութիւն, Դուրնովոն լցնում էր Արխանգելսկի և Վօլօգդայի նահանգների լոր անկիւնները, Սիբիրի աքսորավայրերը քաղաքական «յանցաւորներով»։

Մամուլի, ընտրութիւնների, պրոֆեսիօնալ միութիւնների և այլ շատ հարցերի վերաբերմամբ հրատարակւած և հաստատւած նոր օրէնքները՝ վերջնականապէս ոչնչացրին հոկտեմբեր 17-ի մանիֆէստի բոլոր խոստումները։

Երեւաց փետրւար 20-ի նոր մանիֆէստը, որը պաշտօնապէս յետ վերցրեց 17-ի մանիֆէստը և տւեց մի տեսակ նոր, էապէս նոր ու չը տեսնւած իրաւակարգ, որը և՛ սահմանադրական է և ինքնակալական, որ ուզում է միացնել ջուրն ու կրակը։

Վերջապէս երեւան եկաւ հիմնական օրէնքների նախագիծը և հաստատւեց։ Դա արդէն վերջնականապէս ծաղրի ու ծանակի առարկայ դարձրեց ռուսական ներկայ «սահմանադրութիւնը»։

Եւ այդ ամենը Վիտտէի, այդ երեւակայական մեծ մարդու, այդ հռչակաւոր լաւրիւնադրի «զիջումների պոլիտիկայի» արդիւնքն էր։

Ոչ, հասարակական գործիչ անհատները ու կուսակցութիւնները պէտք է փախուստ տան զիջումների ճանապարհից։ Այդ ուղին թէք մակարդակ է, որի վրայ միանգամայն կանգնողը քանի գնայ՝ աւելի և աւելի արագ կգլխէ գլորւել դէպի ներքև։ Այդպիսի անհատներին ու կուսակցութիւններին ճակատագրաբար վիճակւած է գահավիժւել, տապալւել կոմս Վիտտէի նման։

Հեռատեսութիւն, ուղղութեան կայունութիւն, զուտ ու բիւրեղացած սկզբունքային գործունէութիւն,-ահա թէ ինչը կարող է փրկել թէ հասարակական գործիչ անհատներին և թէ կուսակցութիւններին։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

I

Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնները հասարակութեան ուշադրութիւնն են դարձրել մեր կրթական գործի վրայ։ Մասնաւորից խնդիրը ստանում է աւելի ու աւելի լայն բնոյթ. թէ հասարակութեան, թէ մամուլի և թէ ընտրողական ժողովներում շօշափւում են թէ մեր ներքին ծխական խնդիրները և թէ մասնաւորապէս կրթականը, իրենց ամբողջ բովանդակութեամբ ու մեծութեամբ։

Առ այժմ, մշակւած կարելի է համարել հարցի մի մասը միայն՝—վարչական ձևը։ Մի քանի խաւարամիտ անհատներից ու փարաջաւորներից զատ բոլորն էլ համամիտ են այսօր՝ որ թէ մեր ազգի «տէրտէրների» հայրական հովանաւորութիւնը նահապետական գիւղերում, թէ կրթւած «ազգային» ճիլիտոնների ստրկութիւններն ու անձնութիւնները քաղաքներում ու թեմական հիմնարկութիւններում և թէ, վերջապէս, աւելի բարձր դիրք վայելող «սրբազանների» ու «սրբութիւնների», «առաջնորդութիւնն» ու փաշայական կամայականութիւնները յաղթւել, զզւեցրել են բոլորին։

Մեր ներքին, ծխական-դպրոցական գործերը վարելու է այսուհետև (իր ընտրեալների միջոցաւ) ամբողջ ժողովուրդը և միմիայն ժողովուրդը։

Ոչ «սեպգլուխ» և ոչ էլ «սպիտակգլուխ» կրօնաւորները ոչ մի առանձին դեր չեն խաղալու մեր ներքին դպրոցական-ծխական գործերում։

Կրօնաւորները իրենք ևս ընտրւածներ են ժողովրդի կողմից, ընտրւածներ որոշ, ծխական—և ոչ կրթական—գործերի համար և մնալու են իրենց այդ դիրքում։

Ժողովրդի լիակատար գերիշխանութիւնը պահանջում է, որպէսզի ընտրողներ ճանաչւեն բոլոր հասակաւորները 21 տարուց սկսեալ, բոլոր նրանք, որոնք ապրած են ուրեք է վայրում թէկուզ ամենակարճ ժամանակ։

Ինքն ըստ ինքեան կը վերացւեն նաև այսօրւայ նման հակասութիւններ, երբ 1200 ծուխ ունեցող Հալաբարի Էջմիածնեցոց եկեղեցին տալիս է այնքան ընտրողներ, ինչքան և կիսամեռ Քարափի Հրեշտակապետաց մատուռը իր 60 ծխականներով, կը վերացւեն այն առանձին արտօնութիւնները, որ ունեն քաղաքները գաւառների ու գիւղերի դիմաց։ Զուտ ընտրողական հողի վրայ կազմակերպւած ծխական-թեմական միութիւնները կը կապւեն միմեանց հետ շրջանական, գաւառական կամ քաղաքային և յետոյ թեմական խորհուրդների միջոցաւ։ Ամեն մի միութիւն հաւասարօրէն ունենայ թէ իր խորհուրդը (լայն կազմով ու օրէնսդրական բնաւորութեամբ) թէ իր գործադիր մարմինը—վարչական փունկցիաներով։

Մինչև տեղական մարմինների հաստատւելն ու ամրապնդւելը, առաջին շրջաններում գուցէ աւելի նպատակայարմար լինի, որպէսզի ամենակենտրօնական ազգային հիմնարկութիւն լինի թեմականը, իսկ համայն կենտրօնական կամք՝ գուցէ թէ ունենայ միայն իբրև լոկ խորհրդակցական հիմնարկութիւն, իր պարբերական ժողովների միջոցաւ։

Գալով ծխական-թեմական մարմինների դերին պարզ է համարելու, որ ըստ իրենց գործունէութեան բազմակողմանիութեան՝ նրանք ունենալու են իրենց ներքին ստորաբաժանումները՝ տնտեսական, եկեղեցական, կրթական, բարեգործական և այլն։

Խորհուրդները վարելու են թէ վանական—դպրոցական կալւածքների գործերը և թէ ունենալու են յատուկ խորհուրդ բիւջէ՝ օրէցօր աճող կրթական-բարոյական պէտքերին բաւարարութիւն տալու համար։

Լայն ռամկավարական ընտրողական ձև, կատարեալ ազատութիւն իր գործերը վարելու մէջ և ամփոփում իր ձեռքում բոլոր տեղական ազգային գոյն կրող կրթական-բարոյական փոնդերին—ահա այն հիմքերը, որոնցով ղեկավարւելու ենք մենք մեր ծխական-թեմական խորհուրդները կազմելիս։ Ս. Զ.

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԹԷ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս երևում է վրացիական «Սխիվ-Էլ-բայի» գաղփնները հանգիստ չեն տալիս սօցիալ-դեմօկրատական հայերէն օրգան՝ «Կայծին» և նա ամեն ճիգ գործ է դնում գերազանցելու այդ «ընկերներին» իր անբարեխղճութեամբ ու բացարձակ անպատկառութեամբ։

Իր ժամանակին մենք փաստերով*) ցոյց տւինք «էլվայականների» ու նրանց «ասկէ մախարա—Կայծի» ստախօսութիւնները ու զրպարտութիւնները և զգուշացրինք, որ գոնէ պրօվօկացիայից ու մատնութիւններից խորշեն։

Սակայն կիրքը, կուսակցական կոյր մոլեռանդութիւնն այնքան է տիրել դրանց, որ դեռ շարունակում են իրենց սև բաջագործութիւնները և դեռ յոխորտանքով ասում են, որ իբր թէ «մենք խուսափում ենք հարցից»։

Այո, մենք խուսափում ենք, բայց ոչ թէ բուն հարցից, մաքուր բանակռւից, այլ այն ստոր խծբծանքների մասին խօսելուց, որոնց անունն է մատնութիւն, զրպարտութիւն։

Իսկ այդպիսի մարգարիտներ որքան ուզում էք, կը գտնէք «Կայծի» իւրաքանչիւր համարում։

Դաշնակցութեան հալածելու և վարկաբեկ անելու և նրա շարքերից դէպի իրենց կողմը համակրողներ գրաւելու նպատակով «կայծականները» կանգ չեն առնում ոչ մի միջոցի՝ նոյն իսկ մատնութեան առաջ։ Այսպէս, օրինակ, նրանք արձանագրում են **), որ երբ «Շամշադինի Մոլեկս գիւղից դաշնակցականները պահանջել են 3000 ր., և ապա այդ գումարը վերցրել հարևան 12 գիւղերից»... «Որ Կարբիի մօտ Գիւլ... գիւղից վերցրել են 1580 ր. ինքնապաշտպանութեան համար», «Որ Կ... գիւղից հաւաքել են 820 խուրձ խոտ եկող-գնացող խմբերի ձիերի համար... և 850 ր. էլ ինչ որ «երկար» ասւած բաների բանի առնել տալու համար...» և այլն և այլն։

Այդպիսի տողերն անշուշտ գրւում են այն նպատակով, որպէսզի երևայ, թէ Դաշնակցութիւնը որքան հարստահարում է գիւղացիներին։

—Նրա դրդմամբ «գիւղացին ծախել է իր կովը» և հրացան գնել... Սրանից էլ մեծ ոճի՞ր...

Այո. ինչ հարկաւոր են զէնքերը, խմբերը. չէ՞ որ դրանց փոխարէն կան գեղեցիկ բառեր, ազդու ճառեր։ Երբ խուլիգանական հրոսակախմբերը շրջապատում են գիւղերը, քաղաքները և արիւն ու մոխիր դարձնում ամեն ինչ, այդ ժամանակ բաւական է դուրս գալ և յանուն ազգերի համերաշխութեան մի ճառ արտասանել. ամեն ինչ կը խաղաղւի... իսկ եթէ այդ էլ վտանգաւոր է, կարելի է յետ քաշւել, մի խումբ «ընկերներ» հաւաքել և նրանց շրջանում խօսել ու մխիթարւել, թէ կը գայ մի օր, երբ դասակարգային գիտակցութիւնը վերջ կը դնէ այդպիսի երևոյթներին։ Իսկ ինչ փոյթ, թէ այդ ժամանակ այնտեղ—բուն երկրում տասնեակներով գիւղեր են աւերւում, հազարներով մարդիկ արեան մէջ խեղդւում... Դա շօվինիզմի և բուրժուական հասանքների արտադրութիւնն է, որի հետ գործ չը պիտի ունենայ պրօլէտարիատի պաշտպան (sic) կուսակցութիւնը։

Ահա այսպէս են դատում «մեր սօցիալ-դեմօկրատները», որոնք ամբողջ արիւնոտ տարւայ ընթացքում, առանց մի դրական քայլ անելու, առանց մտնելու խռովւած ժողովրդի մէջ, քարացած հանդիսատեսի նման հեռւից դիտել են նրա արիւնաքամ լինելը և այժմ վեր են կացել և ուզում են դատաւոր հանդիսանալ Դաշնակցութեան գլխին, որը իր զորքերով ամեն տեղ պաշտպան է հանդիսացել հայի կեանքի, գոյքի ու պատւի։

Ողորմելի՛ դատաւորներ... գոնէ բարեխղճութիւն ու ազնւութիւն ունենային դրանք, գոնէ աղաւաղումների ու ստորութիւնների չը դիմէին։

Մի որևէ կուսակցութեան, կազմակերպութեան դէմ կռւելու համար կարելի է քննադատել նրա ծրագիրը, սկզբունքները, տակտիկան. բայց այդպէս չեն անում սօցիալ-դեմօկրատները։ Նրանք ծրագիր ու սկզբունք մի կողմ թողած՝ վերցնում են մանրիկ փաստեր, բացառիկ երևոյթներ, աղաւաղում, չափազանցնում ու նրանցով զարդարում իրենց թերթի էջերը *)։

Սակայն այդ դեռ բոլորը չէ. կրքից ու ստոր հաշիւներից կուրացած՝ նրանք այնպիսի քայլերի են դիմում, որ հաւասար է մատնութեան։

Ընթերցողներին յայտնի է, որ բռնակալ իշխանութիւնն իր արիւնոտ գործերը արդարացնելու համար միշտ էլ աշխատում է յանցանքը ժողովրդի վզին գցել. յայտնի է նաև այն, որ պատժողական զօրախմբերը թէ Գուրիայում, թէ Վարանդայում և թէ ուրիշ տեղերում գիւղերը ամբողջովին են և պէս-պէս բարբարոսութիւններ կատարում միշտ էլ մի պահանջ դնելով.

—Տւէք ձեր զէնքերը. յանձնեցէ՛ք ձեր մէջ գործող ապստամբներին, յեղափոխականներին։

Եւ ահա հայ աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպան (sic!) «Կայծը» իր յիշեալ տողերով նախօրօք նիւթ է մատակարարում գաղտնի ոստիկանութեանն ու ժանդարմներին և դրանով «պատժողական զօրախմբերի» առաջ ճանապարհ բաց անում դէպի յիշեալ հայ գիւղերը, ցոյց տալով, թէ դաշնակցականները որտեղ են մտել, ինչպէս են ինքնապաշտպանութիւն կազմակերպել և զէնքեր գնել։

Թէև ամենքին յայտնի է, որ բռնակալութեան ու զաղանութեան ահ ու սարսափի տակ շատ գիւղեր հէնց ինքնաբերաբար հաւաքել են իրենց վերջին կոպէկները և ուղարկում դիմում են արել Դաշնակցութեանը զէնք գնելու համար, թէև փաստ է, որ շատ տեղերում հէնց իրենք գիւղացիներն են խիստ միջոցների դիմել, որպէսզի ստիպեն իրենց վաշխառու հարուստներին լայն չափով մասնակցելու ինքնապաշտպանութեան գործում, թէև Դաշնակցութիւնը միշտ էլ պատշաճ միջոցներ է ձեռք առել իր անդամների դէմ, եթէ նրանք, իրենց կոչմանն անվայել քայլեր են արել, թէև նա հարկաւոր դէպքում պատժել է այն անհատներին, որոնք հանգամանքներից օգտւելով աշխատել են շահագործել Դաշնակցութեան անունը, բայց և այնպէս «Կայծական հրապարակախօսները» այդ բոլորը մոռացութեան տալով, չափազանցում են ամեն ինչ և ամենաստոր ձևով պատկերացնում իրողութիւնը։

Մնում է, որ քաջ թերթը այդքան գիւղերի անունները յիշելուց և ինքնապաշտպանութեան համար հաւաքած գումարները նշանակելուց յետոյ մի քայլ էլ անէ և յայտնէ այն մարդկանց անունները, որոնք հաւաքել են փողերը և բանի (sic) կերպով գնել «երկարները» (իմա զէնքերը)։ Գուցէ հարկաւոր լինի յիշել նաև, թէ որտեղից, ինչ ճանապարհով ու ինչ ձևով են բերւում դրանք և ինչպէս են պահւում։

Չէ՞ որ այդ բոլորը զրպարտութիւններով համեմելով կարելի է դուրս բերել մի հրէշաւոր պատկեր, որը ցանկալի է տեսնել սօց. դեմօկրատներին՝ իրենց հակառակորդին՝ Դաշնակցութեանն արատաւորելու համար։

Նպատակը արդարացնում է միջոցները—ահա թէ ինչ նշանաբան է դրել «Կայծը», ահա թէ ինչպիսի ճանապարհի վրայ են կանգնած նրա աշխատակիցները։

Եւ այդ բոլորից յետոյ մեզանից դեռ պահանջում են, որ ըստ էութեան խօսենք այդպիսի հարցերի մասին, բանակռւենք այդպիսի հրէշաւոր գրւածքների դէմ։

*) Տես «Յառաջ» օրաթերթում (№ 60, 61, 63 և 67) «Թող փաստերը խօսեն» և «Կեղտոտ ճանապարհ» յօդւածները։

**) «Կայծ» № 7—8։

*) Տես նմուշներ այսօրւայ «Ալիք»-ի «Նամակներ խմբագրութեան» բաժնում։

Ո՛չ. մենք այդ չենք անի։ Հասարակութիւնը ինքը գիտէ զանազանել սեւը սպիտակից և վարձատրել իր խնկական բարեկամներին ու թշնամիներին։

Միայն մի բան կուզէինք յիշեցնել.

—Որքան ուզում էք հայհոյէք, զրպարտէք Դաշնակցութեանը,—դրանով երբէք հող ու համակրանք չէք գտնի գիտակից աշխատաւոր մասսաների մէջ։

—Այսուհետեւ որքան ուզում էք մանրամասնութիւններ տուէք հայ գիւղերի ու դաշնակցականների մասին—մեր կողմից միայն զարհուրանքը ու լռութիւնը կը լինի դրա պատասխանը։

Եւ ուրիշ վերաբերմունքի արժանի էլ չեն այդ ատրճան կեղտի մէջ թաթախուած թերթերը, այդքան ստոր զրպարտութիւնները։

Դաշնակցական

ՍՈՎԸ

—

Աշխարհում մի թագաւոր կայ.
Նա անգութ է.
Սով է նրա անունը...

Ն. Նեկրասով

1891 թւականի սարսափելի սովից յետոյ, տասնհինգերորդ անգամն է, որ գիւղացիութիւնը կանգնած է սովամահութեան սարսափելի պատկերի հանդէպ։

Ռուսաստանի 27 նահանգների անծայր, թախծոտ տափաստանում մահուան անողոք ուրուականը, սովամահութեան ուրուականը նայում է գիւղացիութեան վրայ նրանց խրճիթների, կիսաւեր խրճիթների բոլոր ճեղքերից և պատրաստւում է այդ հողագործ, փոխ մարդկանց քաշ տալ այնտեղ, որտեղ նրանք այլևս ստիպուած չեն լինելու թմբրած քաղցածութեան, քաղցի և անհրաժեշտութեան տանջանքների ճիրաններում...

Ռուսաստանի 27 նահանգների գիւղացիութիւնը այս տարի ապրում է զանգուածային մահուան հոգեվարքը և այդ հսկայական, գերազանց սարսափի առաջ լուռ են բոլոր հասարակական ույժերը։

Մանաւանդ բուրժուական մամուլը, որը բաւականանում է միայն կցկտուր տեղեկութիւններ հաղորդելով, կարծես վախենում է խօսել սովի մասին, ամաչում է գիւղացիական ցնցումներից...

Լուռ չէ միայն բիւրօկրատական միապետութիւնը, որը չի դադարում սովի վայրերը ղրկել հասարած փնտրողներով կոզակներ, գիւրոնիներ ուղարկելուց, որը չի դադարում դեռ քանդել, արածութիւնների ինքնակալ ամբողջ զաւակներ, որը գիւղացիութեան անծայր կարիքներին «օգնութիւն տալու» համար՝ արքունի գանձարանի կողմից նշանակած 30,000,000 ռուբլին վճարել չը տալ գիւղացիներին, որովհետև նրանք ընդունակ են, որի կարծիքով, միայն գիւղացիական «բունտերին» վերջ տալու համար, նրանց «հանդարտեցնելու» համար պէտք է արագացնել նրանց մահացումը։ Եւ տարօրինակ կը լինէր, եթէ կառավարութիւնը, որ վճռել է աւերակների վրայ թագաւորել, ուրիշ կերպ վարուէր։

Իսկ հասարակական ույժերը.

Ամեն կերպ, ամեն ձևով, գրիլ արհաւիրքի մասին, և ոչ ոք չի սովորել դրա սարսափից.

Որովհետև, մենք՝ Ռուսաստանի «հպատակները», որոնք տեսել ենք արիւն, ջարդ, խոլերա, քանի արհաւիրքներ, որոնք ապրել ենք դիահերի ուրուականներով, այլ ևս կորցրել ենք մեր զգայունութիւնը և ամեն մի նոր խոժոռ տեսարանի վրայ նայում ենք այնպէս, ինչպէս եղանակի զանազան փոփոխութիւնների վրայ...

Մի «բնական օրէնք» է դա Ռուսաստանում, որտեղ մարդիկ, «քաղաքացիները» տասնեակ տարիների ընթացքում սովորել են տեսնել, թէ ինչպէս այդ անբնական մահերը կեանքի նորմալ երևոյթ է դարձել։

Մի «նորմալ երևոյթ», որի դէմ կռւելը սովորական միջոցներով կարող էր հնարաւոր թւալ 91—92, 97—98 թւականների շրջաններում, որից յետոյ ժողովրդապաշտ ինտելիգենցիայի համար պարզւեց, որ կռւել սովի դէմ անհնարին է, սովածներին «թալանուած միջոցներով» մահուան ճիրաններից անկարելի է փրկել՝ նրա կենդանի և գոյութեան ներկայ տիրապետող քաղաքական-սոցիալական պայմանների մէջ։

Եւ զգալով իր անզօրութիւնը այդ ժողովրդապաշտ ինտելիգենցիան՝—«փոքր եղբօր» առաջ իր վճարուած պարտքերի քաւութեան տանջանքներով լցուած, հասաւ այն ճիշտ, ու թէ իրեն, և թէ գիւղացիութեան համար փրկարար գիտակցութեանը, որ սովի դէմ կռւելը այլ ևս մի տարօրինակ անախրոնիզմ է, որ այժմ անհրաժեշտ է սովեալների համար կռւել, կռւել նրանց իրաւունքների, նրանց կամքի համար։

Սովի դէմ կռւելը այդպիսով յանձնեց յեղափոխական ազատագրական մարտին։

Բարեգործութեամբ կարող է զբաղուել միայն բուրժուազիան, որն իր խիղճը հանգստացնելու համար կարող է փորձել՝ բարեգործութեամբ ամօքել հսկայական ժողովրդական մասսաների անհանդուրժելի ցաւերը. մի քանի սովածներին հացի փշրանքներ նետելով՝ փրկած համարել ամբողջ ժողովուրդը...

Ոչ, դա ժողովրդապաշտ ինտելիգենցիայի, ժողովրդասիրութեան, ժողովրդական կամքի յաղթանակի համար կռւող տարրերի գործը չէ։

Որպէս զի միակողմանի տեսակէտ չը համարւի այդ, ես կը բերեմ մի քանի տեղեկութիւններ, որոնցից ընթերցողը պարզ կը համոզւի որ կարելիութեան սահմաններում անհնարին է կռւել սովի հետ։

Երկրագործութեան մինիստրութեան կենտրոնական ստատիստիկական յանձնաժողովի հաւաքած տեղեկութիւններով, անցեալ տարի հաւաքած հացահատիկների արժէքը հաւասար է 2535 միլլիոն ռուբլու։ Դա 789 միլլիոն ռուբլով քիչ է նախընթաց տարուանից։ Վերջին անբարեյաջող, գիւղատնտեսական բերքահաւաքութեան տեսակէտից, հնգամեակի ամեն տարուայ միջին բերքի հետ համեմատած, այդ թիւը դարձեալ 316 միլլիոն ռուբլով պակաս է «նորմալ գրութիւնից»։ Ցորենի փութը այս տարի շուկայում 70—75 կոպէկ է։ Անբարեյաջող հնգամեակի հետ համեմատած, այս գինը միջին նորմայից պակաս է 240 միլլիոն ռուբլով, իսկ անցեալ տարուայ հետ համեմատած՝ 570 միլլիոն ռուբլով։ Եթէ ցորենի հետ միասին հաշւենք և գարու, խոտի, կարտոֆիլի կտաւատի և այլ մնս բերքերի պակասորդը (недоборъ), այն ժամանակ՝ սովորական նորմայի հետ համեմատած՝ անցեալ տարուայ ընթացքում գիւղացիների «չը ստացած» գիւղատնտեսական բերքերի գինը հաւասարւում է մօտ մի միլլիարդ ռուբլու։

Եւ այս բոլորը դեռ միայն պաշտօնական տեղեկութիւններով։

Իսկ իրականապէս որքան է մեծ դժնդակ անցեալ տարուայ անբերրիութեան հետևանքը, այդ դեռ ոչ ոքի յայտնի չէ։

Առաջներում գոնէ զեմստվօներից կարելի էր ստանալ փոքր ի շատէ ճշգրիտ և վստահութեան արժանի տեղեկութիւններ, իսկ այժմ այդ ճանապարհն էլ փակուած է, որովհետև Դուրնովոյեան կառավարութիւնը, որը վճռել է, ինչ էլ լինի, խեղդել գիւղացիական շարժումը, աշխատում է հնարաւոր եղածին չափ հեռու պահել զեմստվօի ծառայողներին գիւղացիների հետ շփւելուց։ Այդ նպատակով նա ամեն միջոցներ գործ է դնում. իսկ թէ որոնք են այդ միջոցները, դա ամենքին յայտնի է։

Թէ որքան խոշոր է սովի արհաւիրքը, պարզ երևում է անցեալներում Տուլայի զեմստվօյի մի հաղորդագրութիւնից։ Իսկ այդ զեմստվօն յայտնի է նրանով, որ միշտ ամենաջերմ կերպով կռւել է գիւղացիական պահանջների դէմ, միշտ անտարբեր է եղել դէպի նրանց իրական կարիքները.—

—«15 տարուայ ընթացքում այս հինգերորդ անգամն է, որ սովի պատկերը կանգնել է մեր առաջ և նա ամենասարսափելին է լինելու, մինչև այժմ եղած բոլոր սովերից։ Անցեալ տարի գիւղացիները բոլորովին բերք չը ստացան։ Բոլոր եղածը, ունեցած չունեցածները գիւղացիները արդէն սպառել են։ Մանուկները և պառաւները թափառում և ողորմութիւն են հաւաքում*)։ Ընտանի կենդանիները բոլորը կոտորւում են, որովհետև խոտ չը կայ։ Այդ է պատճառով գիւղացիները ստիպուած են մի երկու ռուբլով ծախել իրենց ձիերը, կովերը և այլն։ Մարդիկ գործ են փնտրում՝ իրենց գոյութիւնը մի կերպ քարշ տալու համար, բայց որպէս ամեն մի անբերրիութեան տարում—աշխատանք չը կայ։ Աստուած մարդուն այդպիսի դէպքերի և պատկերների ականատես չանի»...

*) Նոյնպիսի գրութիւն է տիրում Վօլգայի նահանգներում. Ծ. Հ.

Այդպիսի ակամայ բացականչութիւնով է վերջանում ֆեօդալական-միապետական «ինքնավարական» հիմնարկութեան հաղորդագրութիւնը։

Ահա այդ ողբերգութեան ամենահեռաւոր ուրւանկարը։

Տեղեկութիւնները քիչ են։ Ռուսաստանի բուրժուական մամուլը սարսափում է խօսել, պատկերացնել, նկարագրել արհաւիրքը իր ամբողջ հսկայականութեամբ։ Բայց եթէ նա հետաքրքրւէր էլ, նրան համար այդ բոլորովին անհետաքրքիր լինելով, անկասկած, մարդկային բոլոր խօսքերը թոյլ կը լինեն պատկերացնելու ժողովրդական այդ դժխեմ նահատակութեան պատկերը...

—

Այսպէս, ուրեմն, բուրժուական մամուլի բա[illegible] «ողորմածութեան և ուշադրութեան» կոչերին լսելը չէ, որով կարելի է օգնած լինել գիւղացիներին։

Եթէ ուզում էք օգնել գիւղացիութեանը, օգնեցէք նրան իր պահանջները իրականացնելու՝ իր կամքով երկիրը կառավարելու։

Եթէ ուզում էք աջակցել նրան սովից փրկւելու համար, աջակցեցէք նրան իր բռնաբարւած իրաւունքը ստանալու, իր հողը զանազան տեսակի սեփականատէրերից վերցնելու։

Եւ այն ժամանակ ձեր յուսահատութիւնը՝ սովի սարսափների դիմաց՝ կը փոխւի արև հաւատի դէպի մեծ, լուսաւոր, գեղեցիկ ապագայի յաղթանակը... Թ. Խ—ան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կանանց դիմումը Դումայի պատգամաւորներին։—«Современникъ» թերթը հաղորդում է հետևեալ գրաւոր կոչը, որ ուղղել են մի խումբ կանայք Դումայի պատգամաւորներին.

«Մենք Ռուսաստանի կանայքս, սրանով դիմում ենք ռուսական առաջին ներկայացուցչական ժողովի անդամներին մեր կորստական պահանջով։ Հիմնական օրէնքներ մշակելիս մեզ, ազգաբնակութեան կէսիս էլ նկատի առնել և մեզ էլ տղամարդկանց հետ հաւասար քաղաքական իրաւունքներ տալ։

«Մենք կարծում ենք, որ անհրաժեշտ չէ այստեղ հիմնաւորել մեր այս պահանջի արդարացիութիւնը։ Երկար ժամանակաշրջանի ընթացքում մենք ձեզ հետ միասին կրել ենք իրաւազրկութեան լուծը և այդ իրաւազրկութիւնից մեզ աւելի բաժին է հասել, քան ձեզ։ Մենք ձեր ընկերներն էինք, և ձեզ հետ միասին կռւում էինք հայրենիքի ազատագրութեան համար։ Մեզանից շատերը անվերադարձ քայլել են դէպի բանտը, տաժանակիր աշխատանքները և կախաղանը։ Մենք ձեր ընկերները պիտի լինենք և այն ազատ կեանքում, որի ստեղծման համար տւինք այն բոլորը, ինչ որ կարող էինք տալ։

Մենք պահանջում ենք, որ Դուման մշակելով ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղիղ ձայնատւութեան օրէնքը, իրեն համար պարտադիր համարէ մեզ չը զրկելու այդ իրաւունքից»։

Այդ կոչի տակ ստորագրել են 100-ից աւել կանայք, որոնց մէջ կան գրական և հասարակական ասպարէզում յայտնի կին—գործիչներից շատերի անունները։

Գիւղացիական պատգամաւորների խորհրդակցութիւնները։ Ապրիլի 21-ին տեղի ունեցաւ գիւղացիական պատգամաւորների երկրորդ խորհրդակցութիւնը, որին ներկայ էին աւելի բազմաթիւ գիւղացի—պատգամաւորներ քան առաջին, ապրիլի 19 ին կայացած խորհրդակցութեանը։ Առաջին խորհրդակցութեան մէջ դրւած հարցերը՝ Դումայի մէջ գործունէութեան որոշ տակտիկա մշակելու մասին դեռ վերջնական լուծում չը ստացան։

Միաձայն ընդունեց՝ պահանջել քաղաքական ընդհանուր ամնիստիա, մանաւանդ ագրարային շարժումների պատճառով բանտարկւածների և աքսորւածների վերաբերմամբ։

Բացի այդ՝ նրանք վճռեցին իրենց խորհրդակցութիւններին հրաւիրել և բանւորական ներկայացուցիչներին, որովհետև նրանց, գիւղացիների կարծիքով բանւորութեան և աշխատաւոր գիւղացիութեան շահերը միևնոյնն են և նրանց գործունէութիւնն էլ միևնոյն ուղղութեամբ պիտի տարւի։

Գիւղացի պատգամաւորները Դումայի մասին։ Սամարայի նահանգի գիւղացիական պատգամաւոր Պասստոլյոտօվը, մի «խղճուկ գիւղացի», ինչպէս ասում է նրա մասին կադետական «Рѣчь» թերթը, իր ընտրողներից բաժանւելիս՝ հետևեալ նշանակալից ճառն է ասել—

«Մենք բոլորս էլ գիտենք, որ Դումայից բոլոր իրաւունքները խլւած են։ Ահա մեր բիւրօկրատիան։ Դուք բոլորդ էլ գիտէք թէ ինչ բան է այդ բիւրօկրատիան և ինչպէս են գործում այդ պարոնները։ Նրանք հաւատացնում են, որ կռւում են Պետական շահերի համար. այդ Պետական շահերը նրանք միևնոյն են համարում ժողովրդական շահերի հետ։ Բայց դա սուտ է։ Մենք բոլորս էլ մեր անձնական փորձերից գիտենք, որ նրանք կռւում են միայն իրենց սեփական շահերի համար։

«Մենք մեր պարտքը կը կատարենք Դումայում։ Բայց դա դեռ ոչինչ։ Բիւրօկրատիան դեռ ողջ է։ Դեռ նա է կառավարում երկիրը։ Մենք մեր ճամբով չէ, որ պիտի խլենք իշխանութիւնը նրա ձեռքից։ Այժմ ամեն բան միայն ձեզանից է կախւած։ Մենք պահանջներ կը դնենք և դուք պիտի կռւէք մինչև վերջը այդ պահանջների իրականացման համար։ Միայն ձեր կռւովը կը յաղթենք մենք»։

—Կը կռւենք մինչև վերջը...

—Մենք հաստատ ենք, բայց դուք էլ հաստատ եղէք։

Լսւում են ուրիշ բացականչութիւններ խառն գիւղացիական ամբոխի կողմից, որը հաւաքւել էր իր ընտրեալից բաժանւելու։

Ընտրութիւնները Կովկասում

Թիֆլիսի նահանգ.—Թիֆլիսի նահանգապետը հեռագրական հաղորդագրութիւն ստացաւ, որ ապրիլի 23-ին Ախալքալաքի գաւառի բոլոր գաւառամասերի գիւղական ժողովներում տեղի ունեցած ընտրութիւնները պատշաճ կարգով անցան։

—Թիֆլիսի գաւառի, Սալթաչօյի գաւառամասում վերջացան ընտրողների ընտրութիւնները։ Երկու առաջադիմականներ են ընտրւած։

Քութայիսի նահանգ.—Կովկասեան Փոխարքան մի հեռագրական բողոք ստացաւ Քութայիսի գաւառի բոլոր ընտրողների կողմից, որը ուղղւած է ադմինիստրացիայի գաւառական պարագլուխ պ. Նիժերաձէի դէմ, որը իր թեկնածութիւնը դրած լինելով Սամտրէդիում՝ ընտրութիւնների ժամանակ, լիազօրների վրայ ճնշում է գործ դրել։

— «Баку» թերթը հաղորդում է, որ կառավարութիւնը կարգադրութիւն է արել, որպէս զի Քութայիսի նահանգում չը դրւի նախկին Քութայիսի նահանգապետ պ. Ստարոսելսկու թեկնածութիւնը Քութայիսի նահանգից Դումայի պատգամաւորների ընտրութեան ժամանակ։

— Լրագիրներն արձանագրում են այն փաստը, որ ապրիլի 16-ին, Քութայիսի նահանգում տեղի ունեցած ընտրութիւնների ժամանակ, ազգաբնակութիւնը, շատ թոյլ հետաքրքրութիւն էր ցոյց տալիս դէպի ընտրութիւնները։

Բագու։ Մայիսի 14-ին նշանակւած են Բագու քաղաքի Դումայի պատգամաւոր ընտրողների (վիբօրշչիկ) ընտրութիւնները։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՍԿ ԻՆՔԸ ՓԱՐԻԶՈՒՄՆ Է ԱՊՐՈՒՄ....

—

Խնձորեստան (Խաչենի գաւ.), ապրիլի 21-ին

«...Իսկ ինքը Պարիժումն ա, իրա ընտանիքով ապրում ա այնտեղ...»

Շուշեցի տէր Դաւիթ Ներսիսեանին պատկանող մետաքսեայ գործարանն եմ մտել։ Երկու կարգ շարւած են 40-ի չափ մեքենաներ, և դրցա մօտ՝ կանայք և աղջիկներ։

Գոլորշին բարձրանում, լցւում է սրահում՝ խոնաւացնելով և ծանրացնելով օդը. աւելի հեռու կանգնածների դէմքերն արդէն աղօտ կերպով են երևում աչքիս։ Մեքենաները աղմկում ու շտապ-շտապ պտտեցնում են իրենց անիւները և թելը, յետ քանդելով բոժոժներից, շխրտ-շխրտ փաթաթւում է ոլորակներին...

76—80 հոգի են բանում այդտեղ. բոլորն էլ կանայք, որոնցից չնչին փոքրամասնութիւնը՝ հասակաւոր, իսկ խոշոր մեծամասնութիւնը՝ 12-13 տարեկան աղջիկներ, երեխաներ։ Եւ միայն երկու թէ երեք տղայ։

Ջերմերը մէջին, մեքենաների և բանողների շարքերի մէջով քայլում է գործարանի կառավարիչը։ Բարեւում եմ հետը.—զարմացած առաջ է գալիս ու մօտենում։

—Սա Դաւիթ Ներսիսեանի գործարանն ա, շուշեցի տէր-Դաւթի,—պատասխանում է նա բաւականութիւն տալով իմ հարցին, թէ՝ որին է պատկանում այս մետաքսագործարանը։—Ինքն էլ հիմա Պարիժումն ա...»

Դէ—մտածում եմ ինձ—մարդը գործարանատէր է, կապիտալիստ է, փող շատ ունենալով, կարող կը լինի ապրել Պարիզում։ Կարող է.—մեքենաները գործում են և մետաքս պատրաստում նրա համար, մարդը, արծաթափայլ մետաքսաթելը։

Գործում են և՛ հարսներ ու աղջիկներ մանուկները, արագ-արագ ու անդադար. կողմնակի անձնաւորութեան ներկայութեամբ, փոքրիկները աւելացնում են իրենց ձեռքերի աշխոյժը... Այդ փոքրիկները *) աշխատում են, փող են վաստակում։ Առաւօտեան կանուխ, 5 1/2-ին, գնում են գործարան, տուն են վերադառնում երեկոյեան 6 1/2-ին...

Աշխատանքի ժամերի քանակի հարցը՝ միացած վարձատրութեան խնդրի հետ՝ անվերջ յուզմունքների ու պայքարումների առատ մատակարար է մեր ներկայ կեանքում։ Եւ նախատինքի թուրը անպակաս է լինում գործարանատէրերի գլխից և խղճմտութեան երեսներից... Բայց պ. պ. Դաւիթ Ներսիսեանները խուլ են (և խուլ էլ մնալու են) բանւորի այն բողոքող վշտահար աղաղակներին, որոնց թէ կրճատեցէք ժամերի թիւը, բարձրացրէք օրավարձը։

Դաւիթ Ներսիսեանի մետաքսագործարանում աշխատանքը տեւում է տասներեք (13) ժամ. (մէջը դուրս հանած ճաշելու համար)։ Տասներկու ժամ շարունակ, 8—12 տարեկան աղջիկները բանում են գործարանի խեղդող օդի մէջ։

Տասներկու ժամ... Եւ ստանում են... 9 կոպէկ օրավարձ։ Լաւ լսեցէք—իննը կոպէկ...

Տէր Աստւած։ Ի՞նչն է այստեղ խօսում Ներսիսեանի հոգու մէջ. քարացած ապուշութիւնը, թէ՞ մի դժոխային չարանենգութիւնը, որ փչանելու, խեղդւած անելու վարձի ծարաւով է բանւում։ Ճիշդ է, կապիտալիստի համար չկայ մարդկայնութեան զգացմունք. նա այդքան «սանձարձակ» չէ։ Բայց այդ աստիճանի իջեցնել օրավարձը (minimum-ը)... սա... Սա անխղճութիւն չէ, այլ ուղղակի անպատկառութիւն։

9 կոպէկ!... Այդ minimum-ն էլ դեռ իջնում է՝ 7 կոպէկի, 6 կոպէկի, 5 կոպէկի... Օրական հինգ կոպէկ են ստանում բանող երեխաներից շատերը. ուտելու հացն էլ իրենք պիտի քաշեն...

Շարժւում են այդ երեխաների փոքրիկ մատները, մաքրում են բոժոժները, և արծաթափայլ մետաքսաթելը շխրտ-շխրտ փաթաթւում է ոլորակներին։ Իսկ ինքը՝ Պարիզումն է։

Երևում են գունատ դէմքեր փոքրիկների շարքերում. գունատ, անտարբեր, գործարանի հեղձող օդից։ Բանում են ամբողջ 12 ժամ (8—12 տարեկան ծծկերները(!)) և չարչարանքի վարձն է՝ 5 կոպէկ... Սա՝ խայտառակ բարբարոսութիւն է, կապիտալիստական չինգիզխանութիւն։ Չցեկի է...

«Իսկ ինքը Պարիժումն ա ապրում»... Շքեղ սալոններում, հարկաւ, բուրժուային յատուկ...

*) Կան 8—12 տարեկան երեխաներ, 20—25-ի չափ։

ԹԵՐԹՕՆ

ԱՆՎԵՐՋ ԹՕԹՕՎԱՆՔՆԵՐ

—

Սահման չը կայ նորընծայական թոթովախօսութեան... Օր չի անցնում—նոյնիսկ այս ծանր, տագնապալի օրերում—որ կովկասեան մամուլի այս կամ այն օրգանը՝ փոքր, հայ և այլն՝ թունոտ սլաքներ չը նետեն դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Եւ բոլոր յարձակումները՝ «սօցիալիզմի» հովանու տակ։ Համարեա բոլորը՝ մեր ուղղափառ սօցիալ-դեմօկրատների կողմից։ «Յարձակում» բառը, որ մենք գործ ենք ածում, մի էօֆէմիզմ է միայն, աւելի ճիշտ կը լինէր ասել—լուտանքներ, ինսինուացիաներ, ամենատմայիլ զրպարտութիւններ։ Այդ բոլորը միախառնուած՝ տարափի նման շարունակ տեղում է Դաշնակցութեան ու դաշնակցականների գլխին և որքան աւելի են այդ վերջինները անուշադրութեան, լռութեան մատնում հակառակորդների անարժան պրովոկացիաները, որքան աւելի են նրանք ձգտում իրենց տրամադրելի միջոցներով արձագանք տալ ցաւոտ այժմէութեան պահանջներին, որքան աւելի է հայ ժողովուրդը, հայ աշխատաւոր ընդհանրութիւնը իր հաւաքական վստահութեան բէն տալիս Դաշնակցութեան, այնքան աւելի են սաստկանում ու այլանում նրա փոքրոգի հակառակորդները։ Թայֆայականութեան զգւելի բնազդը միշտ նոր ու նոր սնունդ է առնում, մարդիկ խապառ կորցնում են գլուխը կուսակցական անծայր կուրութեան մէջ,—և շիտակ բարքերի վարժ ընթերցողը, գրական մաքրութեան սովոր աչքը՝ անհնարին նողկանքով է կարդում ամեն օր՝ լախուռն, անսանձ այդ զրպարտութիւնները, հիւսւած միմիայն ու անմիտ «դաւադրութիւնների», «պառակտողականութիւնների» հետ, խմբագրւած թոթովախօս մանուկների ձեռքով...

Կարդացէք երէկւայ «Տիֆլիսսկի Լիստոկ»-ի առաջին երեսում զետեղւած յօդւածը «Պետական Դումայի առաջ» խորագրով։ Հեղինակը, Վ. Վարդանեանց, ըստ երևոյթին հայ է. նրա սօցիալ-դեմօկրատ լինելը աւելի բացայայտ է։ Նա այն սօցիալ-դեմօկրատներից է, որոնք բռնւած են «ինքնամորակման» ախտով։ Ընթերցողը սխալ չը հասկանայ մեզ։ Մեր սուբյեկտը չէ զբաղւած իր անհատական ինքնամորակումով. իր սեփական անձը խարանելով։ Ո՞ւր էր, թէ այդպէս լինէր. մեր էր թէ «ուսանելում» ծոյլ և ուսուցանելում «ժիր» այդ պարոնները մի քիչ էլ իրենց նոր քննադատելու մտահոգութիւնն ունենային... Բայց դա մի առաքինութիւն է, որ չէ գրւած կովկասեան սօցիալ-դեմօկրատների բառարանում։

Ոչ, մեզ հետաքրքրող պարոնը ապազգայնականներից է, նա փարակած է իր ազգային ինքնամորակման տենդով. նա ի հարկէ բացել է կուսակցական բառարանից սովորական Schlagwort-ները՝ «ազգերի համերաշխութեան» «պրօլետարիատի շահերի ու գիտակցութեան մասին», բայց նա պատրաստ է վար դնել ազգային հաւասարութեան ակնոցը, երբ հարկաւոր է գնահատել այս կամ այն խոշոր երևոյթը, այս կամ այն վէրքը, լայնած կովկասեան միջազգային օրգանիզմի վրայ։ Այդտեղ հայ նորընծայ սօցիալ-դեմօկրատը աննման է իր անաչառութեան մէջ. որպէսզի եռանդով ու կատաղութեամբ նա գրոհ է տալիս հայ ազգութեան դէմ, հայ նացիոնալիզմի դէմ, հայ յեղափոխական կազմակերպութեան դէմ, նկարելով նրանց ամենամռայլ գոյներով, համարելով նրանց գլխաւոր պատճառ ամենաքստմնելի ոճիրների, —և միևնոյն ժամանակ ինչպիսի սրտառուչ մտահոգութիւն այդ նէօֆիտների կողմից՝ թաքցնել, վարագուրել կամ խղճալ միմեզ ուրիշ ազգերի թէկուզ ամենացած, ամենավայրագ, ամենամարդասպան արարքները... Ջենտլմէնութիւն՝ անել ի հաշիւ հայ ազգի, հայ ժողովրդի, հայ պրօլետարիատի...

Այդ եզրակացութեանն էք գալիս, կարդալով վերը յիշած յօդւածը, որ շատ կողմերով միանգամայն յատկանշական է մեր երկրի սօցիալ-դեմօկրատական մօրալի համար։ Այդտեղ դուք կը տեսնէք սովորական ֆանֆարօնութիւնը՝ թէ սօցիալ-դեմօկրատիան «Կովկասում համարեա միակ տարաւ իր ուսերի վրայ ազատագրական շարժումը»։ Այդտեղ կը գտնէք և սովորական զրպարտութիւնները՝ թէ դաշնակցականները «նացիոնալիստ» են, թէ երբ նրանք Ռուսահայաստանի ավտոնոմիա են պահանջում, և ի շարս ուրիշ նացիոնալիստների, նրանք ևս երբ թէ ձգտում են ստեղծել արհեստական անջրպետներ Անդրկովկասի ազգերի միջև, ուզում են այդ ճանապարհով մթնացնել աշխատաւորների դասակարգային ինքնագիտակցութիւնը և այդպիսով (լաւ լսեցէք) ամրապնդել այն աննորմալ, թշնամական յարաբերութիւնները, որոնք ստեղծւած են վերևից իշխող դասակարգերի կողմից»։

Այդ բանի համար են աշխատում դաշնակցականները, «հայ բուրժուազիայի իդէօլօգները». Նրանք ոչ միայն մեղադրւում են Թուրք ժողովրդին գրգռելու մէջ, այլ և ճիգ են թափում ատելութեան ու երկպառակութեան սերմը ձգելու նաև հայ ու վրացի աշխատաւոր խաւերի միջև... Այդպէս է հասկացնում Թիֆլիսեան Լիստոկի յօդւածագիրը։

Խեղճ Դաշնակցութիւն։ Ինչպէս նա դուրս գայ այսպիսի ահաւոր խարազանումներից... Կրիլովի զոհակի պէս նա կուզէր թև առնել ու թռչել հեռու за три девять полей, որպէս զի միայն ազատւած լինէր անհանդուրժելի չարքոտանների պոռշտուքներից...

Փրկութիւն չը կայ... Եւ ոչ միայն «Դաշնակցութեան» համար, որին կովկասեան սօցիալ-դեմօկրատների փայտէ սլաքները խոցելու, անդամալուծելու, ջլատելու վրայ են,—այլ և հայ ժողովրդի համար։ Սօցիալ-դեմօկրատական արէօպագը, նոյն իսկ հայ սօցիալ-դեմօկրատականը, վաղուց անողոք «արդարամտութեամբ» ու «անաչառութեամբ» նրան էլ դատապարտել է իբրև մեղսակից (անգիտակցաբար) հայ-թուրքական ընդհարումների ու արիւնհեղութիւնների... Իբրև մեղսակից՝ նոյն չափով, ինչ չափով և Թուրք ժողովուրդը։ Անաչառութեան մեր քաջ ասպետը, կարծես տրամադիր է դեռ աւելին տալ. Նա ուզում է, կարծես, այդ մեղսակցութեան մէջ ևս, առաջնութիւնը տալ հայերին։ Նա ասում է, որ բիւրօկրատիայի և իշխող դասակարգերի ջանքերով սահմանեց հայ և Թուրք ժողովուրդների խորութիւնը, «շնորհիւ միայն հայ և Թուրք գիւղացիութեան թոյլ գիտակցականութեան»։

Եւ ոչ մի կասկած, ոչ մի վարանում։ Դա է բացարձակ, անդարտ ճշմարտութիւնը։ Դուք թէկուզ ամբողջ հատորներ և հարիւրաւոր ապացոյցներ բերէք, որ մեր երկրում խաղացող արիւնալի և քստմնելի ողբերգութեան պատճառների շարքում տեղ չունի հայ բազմաչարչար ժողովուրդը, որ նա երբէք չէ ներգործել Թուրք խուժանի պէս, և չէր կարող ներգործել կառավարական ու խուլիգանական պրովոկացիաներին, որ նա երբէք յարձակողական տրամադրութիւններ չէ ունեցել և չէ ցոյց տւել, որ նա պատրաստ է մի պաշտպանողական, լացող ու բառաչող ողբից աւելին, է, որի շուրջը գիշերին քուքէն են արձակում Թուրք գիւղերից ամբոխն ու բիւրօկրատիայի սպասաւորների հետ... Ի՞նչ փոյթ մեր եկել ֆրազեօրների համար, նրանք դարձեալ պիտի շեշտեն իրենց նողկալի վերաբերմունքը դէպի կռւող մասսաները, դէպի թեթևամիտ համախմբումների խուլիգանական թինը և պիտի ծանրանան հայ բուրժուազիայի, հայ կազմակերպութեան ու նոյնիսկ հայ աշխատաւոր գիւղացիութեան գիտակից կամ անգիտակից մեղսակցութեան վրայ... Այդպէս է պահանջում «անաչառութիւնը», այդպէս է հրահանգում, ըստ երևոյթին, մեր հակառակորդների ադեմատած credo-ն, և նոյնքան ադեմատած քաղաքականութիւնը...

Ego

Նա բաց ասպարէզ ունէր՝ կրթական ճանապարհով ազատութեան նուիրած մի նոր սերունդ առաջ բերելու, որի համար մտադրած էր։ Այժմեան Պարսից Շահը, որ այդ ժամանակ գահաժառանգ լինելով Թաւրիզումն էր նստում, շատ սիրալիր ընդունելութիւն արաւ Աւետիսեանին։

Երբ թրքական բարբարոսութիւնները շատանալով կոտորածների կերպարանք ստացան, 1895-ին Աւետիսեան շտապեց մտնել Վան իր հայրենիք ու այնտեղ կազմակերպեց «Արմենական» կուսակցութիւնը, որի ղեկավարը դարձաւ։

1896 յունիս 3-ի Վանի կռւին, երբ հայ յեղափոխական պետերի և իրենց հետևողների հետ Պարսկաստան անցնելիս, Բարդուղիմէոս վանքի շրջականերում պատերազմի են բռնւում կանոնաւոր թիւրք զօրքի ու համիդիէ քրդերի հետ և այնտեղ պատերազմի դաշտում նա ընկնում է, իբրև գաղափարի մի ճշմարիտ հերոս, որի յիշատակը անմոռանալի կը մնայ հայ ազատութեան բարեկամների սրտում։ Աւետիսեանը ոչ գերեզման չունեցաւ, բայց ունեցաւ մի անմահ յիշատակ։ Ծ.

ՊԵՏՕԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Իմ յիշողութիւններէն)

—

Պարահիսար լեռան կրծքին նա էլ ընկաւ վիրաւոր
Կուրծքը պատռած, սիրտը խոցւած չար թշնամու գնդակով.
Ժեռոտ լեռան լերկ կատարից վար սլացիր սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արա։

—

Երկար տառապեցինք ու մեր այդ տառապանքներուն մէջ կարծէք բան մը կար, որ ա՛ռ ինքն կը ձգէր ամէն մի զգայուն սիրտ կրող հայ-մարդ։

Հեռուէն շատեր եկան ու գնացին և շատեր զոհեցին սուրբ գործին համար։ Բայց գործի դրութիւնը նոր հրահանգներու և ուժերու կը կարօտէր միշտ։

Հ. Յ. Դաշնակցութեան ի յայտ գալով, նախապէս կարծեցինք, ապա և հաւատացինք, որ մշակւած է ծրագիր մը, կազմակերպւած է կուսակցութիւն մը, որը ազգային դատին նուիրած իր փայլուն գործիչներով ու բազմաթիւ մարտիրոսներով սկսել էր հարթել այդ դատի տառապալից ուղին։

Այդ անձնուէր գործիչներէն մէկն էր Պետօն, Վանի դաշնակցութեան այդ համակրելի դէմքը։

—

Մեր այնքան սիրելի Հայկազեան կենտրոնական վարժարանը իր կարճ տևողութեամբ ընծայեց Վանի դժբախտ ու տգէտ ժողովրդեան մի քանի մտաւորականներ, որոնց նոր ու կենսալից ուղղութեան շնորհիւ արդէն ծագած էր տեղացիներուս մէջ հայ մարդու, հայ երկրի ու ինքնապաշտպանութեան գաղափարը։

Ազատագրական շարժումը սկսած էր։

Ճիշդ է, յանձին Փորթուգալեանի, Աւետիսեանի, Փօնտակչեանի և այլոց ունեցանք գաղափարական գործիչներ, որք ամենայն եռանդեամբ աշխատեցան այդ շարժումը հաստատուն հիմքերու վրայ դնել, բայց տաճիկ կառավարութիւնը ուշադրութիւն դարձուցած ըլլալով այդ խլրտումին վրայ, մերայինները ստիպւած տեղի տւին և այլուր միայն կարողացան ազատ շունչ առնել։

Արդէն հալածանք, բանտարկութիւնք և Բաֆրի փաշայի վայրագութիւնք սկսած էին, երբ Վան մտաւ Պետօն։

Պարսկաստանէն անցնելով նա հասաւ Վան, գեղջուկի մը ցնցոտիներու մէջ փաթթւած, երկար ու կեռ փայտ մը ձեռքին, տրեխներ ոտներին, կեղտոտ քօլօզ մը գլխին և մուրացիկի չանթա ուսերուն։

Ոչ ոք կրցաւ զինք ճանաչել, իբրև օտարականի մը և ոչ ոք կասկածեց անոր այդ խեղճուկ արտաքինին վրայ, զի ուրիշ փորձեր եղած էին…

Թէև անծանօթ մեր վայրերուն ու բարքերուն, շուտով այնքան վարժւեցաւ, որ վանեցիէ մը զանազանել չէր կարելի։ Քանի մը օրւայ մէջ թաղերն, տուներն ու մարդիկ ճանաչեց հեռուէն, զիրենք գիտեց, զննեց ու հասկացաւ։

Գեղջուկի մը տարազի մէջ փաթթւած ըլլալով՝ գեղջուկի նման ալ ապրեցաւ։ Նոյն էր անոր համար, թէ ինչ կուտէր, կամ ուր կը պառկէր, բաւական էր բան մը ուտէր կեանքը պահպանել կարողանալու համար և վայր մը լինէր քնանալու ու առիթէն օգտւելով իր մտքերը սերմանէր։

Շատ նեղութիւն ու դժւարութիւն կրեց, բայց բնաւ չը լքեցաւ, չը վհատեցաւ։ Սիրտ մը ունէր բարի ու աննախանձ, և կամք մը՝ աննկուն ու անխորտակելի։ Օր ըստ օրէ հալածանք ու նեղութիւնք կը կրկնապատկէին։ Ամէն տեղ լրտեսներու վոհմակներն կը վխտային։ Ալ անկարելի էր նոյն իսկ երկու հոգով քաղաքի ճանապարհին միասին խօսակցելով հրթևեկութիւն ընել։

Բաֆրիի խելապատակին մէջ նորանոր հրէշաւոր միջոցներ կը յղանային և աշխարհ կուգային ամենավատ ու սոսկալի եղանակներով։ Եւ քիչ յետոյ բանտը լեցւեցաւ անմեղ մարդկանցով, շատերն աքսորւեցան, ընդ որս և՛ քանի մը թիւրք մեծամեծներ։

Պետօն հետատեսութեամբ զգուշանալ սկսաւ և իրաւունք ունէր։ Հետատեսութիւնը յեղափոխական գործիչներու էն մեծ ազդակներէն մէկն է։

Նա շատ անգամ մեր տուն եկած էր և ես մեր Մուղսիէն վախենալով, որպէսզի ինչ ինչ խօսակցութեանց տեղիք չը տամ, զինք իբրև ծառայ մը աշխատեցուցած էի, բազմիցս պատուիրելով մը վրան բարկանալով, որպէս թէ չի կենայ, յիմար գեղջուկ մըն է, թող է, գործը ձեռնէն կառնէ։

Շատ գիշերներ գաղտնի անոր քով զրուցած եմ, կամ մեր տուն բերել տւած և լսած եմ անոր ոգևորիչ խօսքերն։ Կը հիանայի և իրեն այդ խեղճուկ շորերուն մէջ զինք կը բարձրացնէի…

Աշնանային առաւօտ մը, շատ կանուխ, երբ իբրև տան հայր ամենէն շուտ էի զարթնած, յանկարծ փողոցին դուռը երկիցս խորհրդաւոր կերպով ծեծեցաւ։ Շուրջս նայեցայ ու բոլորը քնած նկատելով՝ ուղեցայ սենեկէն դուրս թռչել, երբ՝

«Աղջիկ, տես ով է այդպէս կանուխ դուռը կը ծեծէ…» լսեցաւ յանկէս Մուղսիին ձայնը։

Սոսկացի առաջին րոպէին և քարացայ, ապա նկատելով որ վերմակը գլխին քաշեց, ազատ շունչ առայ և կամացուկ մը դուրս սողացի։

«Ո՞վ է» կանչեցի դրան մօտ հասնելով։

—Ցախ չէ՞ք առնի—պատասխանեց ծանօթ, այլ կեղծած ձայնը։

Դուռը բացի. Ան էր։

«Հարսօ, ցախ չէ՞ք առնէր» կրկնեց նա, միևնոյն ժամանակ դուռնէն ներս նայւածք մը ձգելով։ Համաձայնեցի առնել, քիչ մը սակարկութիւն ընելէ յետոյ։ Ցախով բարձած երկու եզները ընկերոջ հետ ներս բերին և մինչ ընկերն ցախը եզներուն վրայէն վար թափել սկսեցաւ, անոր հասկացուցի աչքով, որ բոլորը դեռ ևս քնած են։ Մօտեցաւ ինծի և կամացուկ մը ըսաւ.—«Ինծ հետևում են, հաղիւ խոյս տւի»։

Սեւեռ յառուկ երկչոտութեամբ նախ վախցայ, ապա ինքզինքս հաւաքելով նշան ըրի, որ յետևէս գայ։ Զինք յարդանոց տարայ ու դուռը վրան փակեցի, ապա ընկերոջը երկու բան պատուիրելով ճանապարհ դրի։

Բոլորը քիչ յետոյ վեր ելան։ Մուղսին իմանալով ցախ գնելս, նախ գինը հարցուց, ապա ցախը տեսնելով, արժանութեան վրայ զարմացաւ։ Խնդճ ծեծեց։

Ամբողջութեամբս կը դողայի, ինչ ընէի չը գիտէի։ Եթէ մէկը յանկարծ գնայ յարդանոցի դուռը բանայ—Աստւած իմ։ Բայց ոչ, Աստւած փրկէն կը տնօրինէր։ Այդ մարդիկ հաց կերան ու քաղաք գնացին, Մուղսին համբիչը չելէկչելեկացնելով պզրիկին վրայ գնաց, իսկ կանայքս սկսեցինք մեր տնային գործերը։

Աշխատելու առեն յանկարծ միտք մը յղացայ ու բան մը պատրւակելով դուրս ելայ ու սենեակ մտայ։ «Շատ հիանալի է» ըսի ինքնիրենս ու դուրս թռայ։ Կամաց մը, որպէս թէ քամին է, դուռները փակեցի և յարդանոցի դրան հասնելով զինք սենեակ առաջնորդեցի ու մտցուցի անկողիններու յետև։ Ան շատ գոհ ցուցուց ինքզինք, որուն համար ուրախութեանս չափ չը կար։

Բաւականին ժամանակ այսպէս ապրեցաւ մեր տունը, ցերեկներ անկողիններու յետև, իսկ գիշերներ թոնիրի վրայ, երբեմն ալ ուրիշ տեղեր կը գնար։ Պետօի գալուստը սկզբէն յայտնի էր երիտասարդներուն. օրըստօրէ աւելի տեղեկանալով անոր անձնւէրութեան, անով հետաքրքրւել ու ոգևորւել սկսած էր, մանաւանդ քանի մը գործերէ յետոյ…

Երիտասարդութիւնը սակաւ առ սակաւ նոր քարոզչի շուրջը հաւաքւեցաւ։ Պետօն ուրախ էր և իր ուրախութիւնը բազմիցս յայտնած էր տեսնելով իր շուրջը համախոհ ու եռանդուն գործողներ, որոնց հետ սկսեցաւ իսկական գործը յառաջ վարել, երբ չը մոռցաւ նաև մեզ—իգական սեռս։ Մեր մէջէն խումբեր կազմեց և զէնքի գործածութիւն կը սորվեցնէր իր կրակոտ խօսքերով։

Իսկական գործը երկրին մէջ սկսած էր և Պետօն իր քաջութեամբ ու անձնական օրինակներով ներշնչող ու ուղղող կը հանդիսանար։

Ծանր ու դժւար է քարոզել մարդկանց նոր գաղափար, նոր ուղղութիւն, մանաւանդ այնպիսի մի տեղ, ուր դարաւոր հպատակութիւնը իր սոսկալի դրոշմն է դրած և ուր խոչընդոտներ քարոզչի հոգին բերան կը բերեն։

Բայց Պետօն չը թուլացաւ և ադոր համար բարձր է նա բոլորիս աչքին։

—

Մի տեղ նստել, միայն մի գործով պարփակել իր գործունէութիւնը, չէր կրնար բաւականութիւն պատճառել անյագ Պետօի անյագ սրտին ու մտքին և ան, մի օր հոս, օրմը հոն կը գնար… օր մը այս գործը, միւս օր՝ միւս ժամին ան կը կատարէր և այդպիսով բոլորին իր ներկայութեամբ ոգևորութիւն և եռանդ կը ներշնչէր, այդպիսով բոլոր գործերուն ուղղութիւն կը տար։

Երբեմն, հալածանաց և լրտեսութեանց բուռն առեն, ստիպւեցաւ զանազան ձևերու և տարազներու տակ մտնել։

Ժամանակ մը հարկադրւեցաւ իր այնքան սիրած ու փայփայած Վան թողուլ և Բաղէշի կողմեր գնալ։ Բայց բոլորովին խզել իր անձնական յարաբերութիւնն Վանէն, ադ չէր կարող, որու համար սկսաւ կտաւի առևտուր Վանի ու Բաղէշի միջև և ինքն իբրև առևտրական կուգար ու կերթար։

Բայց նկատւեցաւ ու թողեց։

Մի առ ժամանակ ծառայութեամբ և ջրաղացպանութեամբ պարապեցաւ, միանգամայն չը մոռանալով իր սիրած ու մեծ պաշտօնը։

Այլ և սիրեմ յիշել, յիշել ու պարծանալ, հիանալ թէ ինչպէս իբրև գործաւոր, բահը ուսին, հրապարակներու վրայ, եկեղեցիներու դրանց առաջ կանգնած այլ աշխատաւորներու շարքին մէջ, կը սպասէր մինչև վարձւելը, երբ շատ անգամ լռակեաց կը հետևէր օրւայ նորութեանց, տեղացիներու մտաց արտայայտութեանց, դէմքերուն, կամ կեղծելով խօսել տեղական բարբառով՝ իր մտքերն կը սերմանէր խեղճ ու տգէտ աշխատաւորներուն մէջ՝ արմանք ու զարմանք պատճառելով նոցա։

Այսպէս կը մնար երկար, երբեմն ժամեր, մինչև օտար մը, շատ անգամ ծանօթներէն մէկն գար զինքը վարձէր…

Երկար չը տևեց սիրելի Պետօի գործունէութիւնը։ Վրայ հասաւ 96-ի կոտորածը, երբ հիւանդ էր. բայց իբրև հիւանդ չը մնաց, անկողնուն չը ծառայեց։ Զինւած բժիշկներու խորհրդին, արիաբար իր խումբով պատերազմի դաշտն իջաւ ու իր ներկայութեամբ և ոգևորիչ խօսքերով եռանդ ու ոգի կը ներշնչէր կռւողներուն։

Մի շաբաթւայ քաջարի ընդդիմութիւնէն յետոյ, եւրօպացւոց դեսպաններու միջնորդութեան համաձայն, բոլորն միասին հեռացան Այգեստանէն, որպէսզի խաղաղութիւն վերահաստատւէ։ Բայց Պարսկաստանի սահմանագլխին մօտ 800 հոգի զոհ գնացին տաճիկ կառավարութեան դաւաճանութեան։ Պետօի համար կըսեն, երբ ձի նստած կը խրախուսէր իր զինւորները, հեռուէն գնդակ մը եկաւ ու զինք գետին գլորեց…։

Ընկաւ պաշտելի Պետօն…

Թող նրա անունն ու յիշատակը անմոռաց մնայ մեր մէջ, մինչև այն ցանկալի օրը, երբ մեր մռայլ հօրիզօնի վրայ ազատութեան արշալոյսն կը ծագի և մենք կը կարողանանք գնալ անոր անյայտ շիրիմն գտնել՝ արտասուել համբուրել ու ըսել՝

—Փառք քեզ, ազատութեան անմոռանալի քարոզիչ։ Վանուհի

ԱՊՐԻ՛Ր ՎԱՆ

—

Տաճկահայաստանի պատկերը միշտ առանձնապէս անդրադարձել է Վան-Վասպուրականում։ Տառապեալ Վա՛ն. հայ յեղափոխութեան այն մեծ փառարանը, ուր առաջին անգամ տնկւեց հայկական դատի իրականութեան ու վսեմ իղձերի առեղծւած ազատութեան մեծ դրօշակը, որի վրայ գրւած էր՝

Մահ կամ ազատութի՛ւն.

Քո առմիկ որդիները, կռւելով-կռւելով մէկ-մէկ ընկան, ու չը գտնւեց մէկը, որ իր մէջը դարձնէր՝ բոլորը բարձրագլուխ, կրծքարաց։ Նրանք պատերազմեցան վայրենի խուժանի, կանոնաւոր զօրքի, թնդանօթների, ռումբերի դէմ. նրանք պատերազմեցան իրենց տներից, լեռնային պատնէշներից. մէկ-մէկ ընկան, բայց չը լքեցին իրենց դրօշը՝։

Ութ օր ցոյց տւին բռնակալ թշնամուն՝ հայ հոգւոյ մարդկային բարձրութիւնը, ու նրա ունեցած ազատասիրութեան փայլը։

Թշնամին ստիպւեց ակամայ յարգել նրան, ու իր լեզւով, գաղափարի ու սրի զինւորներին ամենք ի միասին առած, անւանեց «Ջանֆիդա», որ նշանակում է անձնազոհ։

Այսօր այդ յիշատակն է, որ մենք յարգում ենք, ծունր ենք իջնում անվեհեր հոգիների առաջ։

Այս տասնամեակը յիշատակելով, մենք ապրում ենք մեր հերոսների հոգւով, ու նրանց ապրեցնում ենք մեզանով։

Այս տասնամեակը մեծարելով մենք ցոյց ենք տալիս մեր ներկայ ու ապագայ սերունդին, որ բռնակալութեան դէմ ազատութեան ու հայրենիքի համար կռւողները մեռած չեն համարւում. նրանք կենդանանում, ապրում ու անմահանում են ապագայ սերունդների հոգում։

Ապրի՛ր Վան. ապրի՛ր նրանց հետ, որոնք քեզ համար, ազատութեան համար կռւեցին ու ընկան… Յ. Շահպազեան

ՁԱՅՆ ՄԸ ԵՐԿՐԷՆ

—

Վան, 15 մայիս

Եւ մենք ունինք թէ գործ, թէ օր.
Եւ այդ օրը մեծ է իր տեսակին մէջ։

Յիշել ու պատկերացնել այդ օրը—յունիս 3-ը, յիշել ու մտքի մէջէն շարել շարան անցունել բոլոր այն իրողութիւնները, որք կապւած են այդ մեծ օրւայ հետ, յիշել այդ օրը իր ամբողջութեամբ ու ընդվզումին արտայայտութեամբ՝ յիշել վերջապէս և՛ բոլոր անոնց, որոնք իրենց էութեամբ կապւած են այդ օրւայ հետ ա՛ս կը փոխադէի տեսնել։

Յիշել այդ օրը և չը սոսկալ, չուրախանալ, ուրախութենէն չը խենթանալ, ապա չը տրտմել, չողբալ—այդ անկարելի է։

Յիշել յունիս 3-ը և ամբողջ մարմնով չէլեքտրականանալ, անհուն ուրախութեամբ ու խոր վշտով չը ցնցւել ու չուժաթափւել-կըսեմ ինքս չեմ կրնար։

Յիշել յունիս 3-ը և կարմիր չը թքել ու կարմիր չարտասուել—քար ծնած պէտք է լինել։

Բայց ինչ որ վեհագոյն է ու պաշտելի, յիշել այդ մեծ օրը ու չը հաւատալ, որ մենք դեռ երկար պիտի ապրենք իբրև մի ամբողջութիւն, որովհետև տանջւելու ընդունակ ու համբերող ենք—ադ ալ ամենավատ տեսակի յոռետեսութիւն է։

Այո, մենք դեռ երկար կապրենք, քանզի տանջւելու ընդունակ ու համբերող եղանք ու ենք։

Տանջւելն է մեր ազգի բնորոշ առանձնայատկութիւնը։

Տանջւեցինք անցեալին մէջ, դարեր առաջ. տանջւեցինք տարիներ շարունակ, տանջւեցինք երէկ և տակաւին կը տանջւենք այսօր և թերևս շարունակաբար։

Կեանքն ինքն իսկ տանջանք է. բայց երբ ադոր կը միանայ թշնամուն տանջանքը—մի՛ն, սիրտ պիտի որ համբերէ, մարմին՝ որ տանի։ Տեսնել բարեկամդ, դրացդ, եղբօր ու ծնողաց տանջւելն և ոչինչ կրնալ ընել—ինչ սոսկալի վիճակ է։ Զարչարւել ու հալածւել դատապարտւած, երբ ոչինչ չես ըրած, երբ լոկ կասկածանաց զոհ ես, գիտենալ ու ոչինչ չըկրնալ ընել—դա արդէն մեծ տանջանքն է։

Եւ մենք տանջւեցինք ու զոհւեցինք։

Այլ եկաւ օր մը, երբ տանջւեցինք ու զոհւեցինք, և դա ութ օր շարունակ…

Թէպէտ, սիրելիս, այդ ութ երջանկագոյն օրերը յիշէր և կը խնդրէի քեզանէ ապրել այդ մեծ օրին տակ այդ յիշողութիւններով։

Կան յիշողութիւններ, որոնցով միայն ապրելն անգամ երջանկութիւն է։

Եւ թող անցեալի այդ յիշողութիւններով պահ մը երջանիկ զգանք զմեզ։

Յիշի՛ր և մեր քաջերը ու օրհնի՛ր նոցա յիշատակը և որոնք այսօր անյայտութեան մէջ կը մնան, որոց շիրիմներու վրայ խաչ մը չը տնկւեցաւ, պատուզ մը խունկ չը ծխւեցաւ։

Օրհնեալ ըլլայ բոլոր նոցա յիշատակը, որք ուրիշի համար ապրեցան և ուրիշի համար ալ մեռան…

Մեռան… մեռան և՛ շատերը. այլ ո՛վ բան մը ըսաւ, ո՛վ ըսաւ գլուխս կը ցաւէ և կամ ո՛վ անհանգստութեան փոքրիկ նշան մը ըրաւ—ոչ ոք, սիրելիս։

Բայց և այնպէս միշտ, նոյն իսկ ամբողջութեան այս կամաց-կամաց խեղդւելու օրերուն, սիրեմ յուսալ, որ կը գայ այն օրը, երբ այնչափ արիւն կը թափէ, լեռներն ու ձորերը արիւնով կը հաւասարին, որ մենք արեան տեսքէն կատաղած, հոտէն արբեցած կը ցնցւինք ամբողջութեամբ, մի ծայրէն միւս ծայր և բոլորս մէկանց ընդվզումի նշանին մարտնչելու դաշտ կելնենք… Վահրամ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ

—

Այսօր կատարւում է ընտրութիւնը Ներսիսեան դպրոցի 12 հոգաբարձուների, որոնք չորս տարի ժամանակով պիտի վարեն դպրոցի ուսումնական և նիւթական գործերը։

Հարկ չը կայ շեշտելու, թէ որքան ծանրակշիռ է մեր առաջնակարգ կրթական հիմնարկութեան բարենորոգման հարցը և թէ որքան, հետևապէս, ծանր է ընտրողների պատասխանատուութիւնը։

Ներսիսեան դպրոցը իր պատկառելի դերն է ունեցել տասնեակ տարիների մեր ժողովրդական լուսաւորութեան գործում. ցանկալի է, որ նա այսուհետև աւելի կատարելութեամբ շեշտէ իր այդ դերը։ Նա պէտք է կանգնած լինի շատ աւելի բարձր, քան մինչև օրս է եղել, նա պէտք է դառնայ միջնակարգ դպրոցի մի կատարելագործւած տիպ։ Նրանից պիտի դուրս գան հայ պատանիները, երիտասարդները այնպիսի մտաւոր պատրաստականութեամբ, որ համալսարանների, բարձր ուսման տաճարների շէմքը ոտք կոխած ժամանակ նրանք չը յայտնւեն կատարեալ պրոֆաններ, որոնց համար անըմբռնելի, անմատչելի լինի համալսարանական դասաւանդութիւնը։

Բայց Ներսիսեան դպրոցի կարևորագոյն միսիան այն է, որ նա հանդիսանում է իբրև մի տեսակ ուսուցչանոց. իբրև այդպիսին՝ նա ոչ միայն պիտի մատակարարէ մեր գաւառական դպրոցներին պատրաստ մանկավարժներ, այլ ուսուցիչներ բառիս բովանդակ նշանակութեամբ, նոր սերնդի իսկական կրթիչ-դաստիարակիչներ։

Պէտք է բարենորոգել Ներսիսեան դպրոցը։ Նիւթական անհրաժեշտ միջոցները լիակատար հնարաւորութիւն են տալիս այդ իրագործելու, հարկաւոր է միայն կարգ-կանոն մտցնել անխնամ թողնւած գոյքերի մէջ։

Աշխարհիկ ոգին պէտք է տիրապետէ դպրոցի բովանդակ պաշտօնավարութեան մէջ։ Այդ արդէն մի տեսակ պօստուլատ է մեր հասարակական գործունէութեան բոլոր ճիւղերում։ Վերակազմել պէտք է դպրոցի ամբողջ սիստէմը ժամանակակից պահանջների համեմատ։ Ժամանակները փոխւում են, քաղաքական հասարակական պայմանները յեղաշրջւում են կամաց-կամաց, ծնունդ տալով նորանոր հարցերի ու պահանջների։ Հարկաւոր է արձագանք տալ նրանց։ Հարկաւոր է ինտելլիգենցիա—ձեռնհաս, խելահաս, գիտութեան ըստ կարելւոյն առատ պաշարով զինւած—որ ընդարձակ ճիւղաւորութիւններով ծաւալւի հայկական գաւառների մէջ և ղեկավարէ մեր ժողովուրդը նոր կեանքի ուղղութեամբ։

Մենք չունինք, քիչ ունենք այդպիսի ինտելլիգենցիա և այդ խոշոր, զգալի պակասը լցնելու կոչւած է մասամբ Ներսիսեան դպրոցը։ Նա պէտք է անհրաժեշտաբար որոշ էւոլիւցիա կրէ կեանքի ու մտքի նոր պայմաններին յարմարւելու համար։ Անհրաժեշտ է նոր առարկաներ մտցնել, և փոփոխել—կրճատել կամ մեծացնել—հների ծաւալը։ Անհրաժեշտ է մտցնել ընդարձակ ու ճշմարիտ բնագիտութեան հետ՝ նաև հասարակական-քաղաքական որոշ գիտութիւններ, տարրային, ի հարկէ, ձևով, որպէսզի երիտասարդ—ուսումնաւորը, գաւառ ընկնելով և տանձնելով նոր սերնդի ու ժողովրդի ղեկավարութեան պատասխանատու գործը, գիտութեամբ կարողանայ ճանապարհ գտնել մտաւոր հասարակական կեանքի ալէկոծող անթիւ ու այլազան խնդիրների մէջ։

Ինչ տեսակէտից էլ նայելու լինենք, ժամանակ է և գերագոյն ժամանակը՝ հիմնական բարեփոխութեան ենթարկել մեր առաջնակարգ դպրոցը։ Այս պահանջն է որ կատեգօրիկ հրամայականի պէս դրւում է նորընտիր հոգաբարձական մարմնի առաջ։ Այդ պահանջն է, որ պէտք է ի նկատի ունենան ընտրութեան կոչւած լիազօրները։ Ե.

ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Այն ժամանակ, երբ նորից ու նորից հոսում է ժողովրդի անմեղ արիւնը, երբ թուրք ազգաբնակութեան մութ ուժերը պրօվօկացիայի ազդեցութեամբ նոր հարւածներ են հասցնում հայ աշխատաւոր մասսային, երբ արիւնոտ փոթորիկը Երևանից անցել է Սուրմալի և այլ շրջաններ—ահա այդ ժամանակ իշխանութիւնը փոխանակ միջոցներ ձեռք առնելու արիւնհեղութիւնը դադարեցնելու համար՝ իր աւանդական սովորութեամբ դարձել զբաղւում բիւրօկրատիական գրագրութիւններով։ Նա դիմումներ, հեռագիրներ է ստանում և հերքումներ գրում, ձգտելով ցոյց տալ, թէ իր ապուխտ և արդար են, և եռանդուն, և անաչառ. .

Այո, նա հերքումներ է գրում, իսկ այնտեղ հոսում է արիւնը, կոտորւում են մարդիկ։ Այդպէս է եղել ամբողջ 16 ամիս, այդպէս է շարունակւում և այժմ։ Սակայն լսենք այդ բնորոշ հերքումները, որ տպւած են պաշտօնական «Кавказъ» լրագրում.

«Հայ-Թուրքական ընդհարումներին վերջ տալու նպատակով, կովկասեան Փոխարքայի խորհուրդի և երկու թշնամացած ազգութիւնների ազգաբնակութիւնից ընտրւած ներկայացուցիչների միասին որոշման համաձայն, Փոխարքային վարչութեան կից կազմւել է մի առանձին խորհրդակցութիւն հայերի և թուրքերի ընտրեալներից բաղկացած, իսկ գեներալ-նահանգապետների, նահանգապետների և գաւառապետների մօտ կազմւել են նոյնպիսի խաղաղարար մասնաժողովներ երկու ազգութիւնների ընտրեալ ներկայացուցիչներից այն պայմանով, որ տեղական իշխանութիւնները կարողանային դիմել նրանց՝ անհրաժեշտ դէպքում աջակցելու իրենց հայ թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ խնդիրներում։ Թւում էր, որ յիշեալ մասնաժողովները, որոնք սահմանւել են ժողովրդի արժանահաւատ անձինքների նախաձեռնութեամբ, կազմւելուց յետոյ, այն մարդիկ, որոնք որև է կերպով իրենց իրաւունքները խախտւած են համարում հայ-թուրքական ընդհարումների պատճառով, կամ ադմինիստրացիայից, կամ թէ մասնաւոր անձերի կողմից, իրենց գանգատներով նախ և առաջ պէտք է դիմեն տեղական այն իշխանութիւններին, որոնք հնարաւորութիւն ունեն տեղական ազգաբնակութեան կողմից ընտրւած խաղաղարար մասնաժողովի անդամների միջոցով ստուգութեան հետևանքի համեմատ գանգատին տալ այս կամ այն ուղղութիւնը։

Սակայն վերջին ժամանակներս Կովկասեան Փոխարքայի անունով անմիջապէս ստացւում են հայ-թուրքական ընդհարումների առիթով մասնաւոր անձերից յայտարարութիւններ ու գանգատներ, թէ վարչական պաշտօնեաների, և թէ խաղաղարար մասնաժողովի վերաբերմամբ։ Եւ այդ գանգատները սովորաբար անհիմն են, որովհետև նրանց ճշմարտութիւնը հաստատող փաստեր կամ ապացոյցներ բոլորովին չեն յիշւում։

Այսպէս օրինակ, մայիսի 30-ին, բազմաթիւ անձերի ստորագրութեամբ, Փոխարքային ուղարկել են Երևանից հետևեալ հեռագիրը.

Մայիսի 27-ի անցքի մասին «Т. Л.», «Ալիք» և «Тифл. Вѣст.» լրագրերում հաղորդւած տեղեկութիւնը, որին ստորագրել է գեներալ նահանգապետ Եացկևիչը, չէ համապատասխանում իրողութեանը։ Թուրքերի յարձակումը անպայման նախամտածւած էր, առաջուց կազմակերպւած, գիտութեամբ պատրաստւած էր երկու թուրքերի կռիւը, հայերի մէջ ոչ մի կռիւ չէ պատահել։ Թուրքերը կրակել են ազդանշանը և միաժամանակ յարձակւում են գործել հայերի վրայ քաղաքի զանազան մասերում։ Իրերի իսկական դրութիւնը կը զեկուցանենք Ձերդ պայծառափայլութեանը հայ ազգաբնակութեան կողմից ընտրւած ներկայացուցիչները։ Դրութիւնը վտանգաւոր է, պաշտպանութիւն ենք խնդրում»։

Այդ միևնոյն օրը, մայիսի 30-ին, Փոխարքան ստացել է Աղդամից մի քանի մարդկանց ստորագրութեամբ ուղարկւած մի այսպիսի հեռագիր.

«Գեներալ Գօլօշչապօվը, Եւլախ գալուստէս, յայտարարեց, ի միջի այլոց, որ նա արձակելու է Շուշու գաւառապետ Ցրէյլիխին. այդ բանը արդէն յայտնի էր դարձել մեզ նախ քան գեներալի գալը՝ Աշոտ եպ. նամակից, որը հաղորդել է իր հօտին, որ իբրև թէ նա պաշտօնազուրկ կանէ գեներալ-նահանգապետ Ալիֆանին և Ցրէյլիխին։ Թէ ինչո՞ւ է կառավարութիւնը համաձայնել Աշոտ եպ. առաջարկութեանը՝ այդ մեզ յայտնի է, բայց քաղաքական պարտականութիւնը պարտաւորեցնում է մեզ յայտնել Ձերդ պայծառափայլութեանը, որ այդ գաւառապետի արձակելը աղաղակող անարդարութիւն կը լինի, որովհետև նրա կողմից մենք ոչ միայն ոչ մի յանցանք, այլ նոյն իսկ մի ամենաչնչին անբարեխղճութիւն չենք նկատել։ Ընդհակառակը, մեր հայրենի Շուշի քաղաքը այն ժամանակ, երբ հայկական կազմակերպւած զօրքը ամիս ու կէս շարունակ պաշարւած դրութեան մէջ էր պահում, իր փրկութեամբ ամեն րոպէ իրեն սպառնացող ջարդի ու աւերի համար պարտական է միայն այդ անխոնջ, փորձառու գաւառապետի ընդունակութեանը և համբերութեանը, որը քաջ, սառնամտութեան և պաշտպանման բոլոր դրկողութիւններին ենթարկելով, կարողացաւ փրկել քաղաքը անխուսափելի կորստից։ Մի այդպիսի հերոսական սխրագործութեան համար մենք կարծում էինք, որ նա կարժանանայ կառավարութեան առանձին բարեհաճութեան և կը մնայ անփոխարինելի գաւառապետ մեզ մօտ, մինչդեռ այդպիսի արժանաւորել խրախոյսի փոխարէն, Աշոտ եպ. դուրս է վռնդում նրան ծառայութիւնից միայն նրա համար, որ հայերին չը յաջողւեց նրան իրենց ձեռքն առնել և թելադրել նրա մտքին ու սրտին իրենց ուզածը, որ մեր կարծիքով յանցանք չէ կարող ծառայել նրան հեռացնելու համար, այլ մի ծառայութիւն, որ արժանի է ընդօրինակութեան։

Ինչ վերաբերում է գեներալ Ալիֆանի տեղափոխութեանը, այդ բանում նկատւում է աւելի մեծ անարդարութիւն թէ նրա համար, որ հիմնաւոր պատճառ չը կայ, և թէ այն պատճառով, որ իր բնաւորութեան ամբողջութեամբ և անկողմնապահութեամբ անաչառութեամբ և առհասարակ իր անհատական արժանաւորութիւններով նա անփոխարինելի է, և այդ պատճառով նրա հրաժարականը մեր նահանգի համար անհատուցանելի կորուստ է։ Այդպիսի պայմաններում Ցրէյլիխի և Ալիֆանի հրաժարեցնելով մենք [illegible]

վարութիւնը համաձայնել է մասնել մեզ հայերի կողմից ջնջման, և ուստի համարձակւում ենք յուսալու, որ կառավարութիւնը Աշոտին տւած իր համաձայնութեան վրայ, Ցրէյլիխի հրաժարեցման ու Այլֆատնի տեղափոխութեան առիթով, ստանալով մեր ներկայ հեռագիրը, կը նայի իբրև մի գործած ակնյայտ սխալի վրայ և թողնելով նրանց իրենց նախկին պաշտօններում, չի վիրաւորի մեր հաւատարիմ հպատակութեան զգացմունքը։ Միևնոյն ժամանակ հարկաւոր ենք համարում հաղորդել, որ Ձերդ պայծառափայլութեան խորհրդին կից կազմւած պատգամաւորական խորհրդակցութիւնը, իրողութեան անհամապատասխան զեկուցումներ է անում ձեզ,—ինչպէս, օրինակ, այն վկայութիւնը, որ իբրև թէ թուրքերն էլ են յայտնել Աշոտին իրենց դժգոհութիւնը Ցրէյլիխի և Այլֆատնի դէմ, մինչդեռ այդպիսի բան չէ եղել և չը կայ էլ, ուստի այդ մասնաժողովը չէ արդարացնում իր կոչումը, ուստի և պէտք է արձակել, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ այդպիսի խաղաղարար մասնաժողովները, ուր որ նրանք գործել են, վերջացել են կատարածով։

Որքան էլ որ ցանկալի լինի գոհացում տալ ազգաբնակութեան օրինական խնդիրներին ու գանգատներին, այնուամենայնիւ վերևում առաջ բերած հեռագիրների նմանների համար, որոնք ոչ մի առանձնապէս հիմնաւոր փաստեր չեն պարունակում իրենց մէջ, ոչ մի կարգադրութիւն չի անւիլ։ Այդ պատճառով, թէ ժամանակը խնայելու և թէ ազգաբնակութեանը աւելորդ դրամական ծախսերից ազատելու համար, շատ ցանկալի է, որ այն անձինք, որոնց իրաւունքները որ և է բանով խախտւած են, կամ առ հասարակ եթէ նկատում են այնպիսի երևոյթներ, որոնք կարող են յուզել հասարակական հանդստութիւնը, դիմէին նախ տեղական իշխանութիւններին կամ տեղական խաղաղարար մասնաժողովներին, որոնք բաղկացած են ազգաբնակութեան արժանաւոր ընտրեալներից և նպատակ ունեն ընդհարումների առաջն առնել ու քննել այդպիսիները։ Միմիայն այն դէպքում, եթէ իրենց արդարացի խնդիրների կամ գանգատների համար բաւարարութիւն չեն ստանայ տեղական իշխանութիւնից, հարկաւոր է դիմել Փոխարքային։

Մասնաւորապէս Աղդամի վերոյիշեալ հեռագրի առիթով, անհրաժեշտ է բացատրել, որ Գանձակի նահանգի բաժանումը երկու գենեբալ-նահանգապետութեան և Այլֆատնի յետ կանչելը կատարել է ոչ թէ Աշոտ եպ. խնդրանքով, այլ վերջին ժամանակներս Գանձակի նահանգում երկու ազգութիւնների թշնամութեամբ յաճախակի կատարւող ոճիրներով, որը պատճառ եղաւ գեներալ Այլֆատնի գործը թեթևացնելու, և մանաւանդ ուշադրութիւն դարձնելու Նուխա-Շուշի պօստային ճանապարհի վրայ։ Իսկ ինչ վերաբերում է Շուշու գաւառապետ կապիտան Ցրէյլիխին, նրա ծառայութիւնը փոխելու մասին Փոխարքայի վարչութեան մէջ մինչև այժմ ոչ մի մտադրութիւն չէ ծագել։

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Երէկ Թիֆլիսի առաջնորդարանում խորհրդակցութեան էին գումարել ծխական ժողովների կողմից ընտրւած ներկայացուցիչները, որոնք հրաւիրւած էին ընտրելու 4 պատգամաւորներ հայ-թուրքական նահանգական մասնաժողովի համար։

Ինչպէս յայտնի է Թիֆլիսը ունի 23 եկեղեցի, ուստի և հրահանգի համաձայն պէտք է ընտրւած լինէին 23 ներկայացուցիչներ։ Սակայն, չը նայելով կրկնակի ու եռակի հրաւէրներին մի քանի եկեղեցիներում (7) ծխականները չէին հաւաքւել և ընտրութիւն չէին կատարել։

Այդպիսով ընտրւած էին միայն 16 ներկայացուցիչներ, բայց դրանցից 5-ն էլ ժողովի չէր եկել։ Ներկայ էին միայն 11 ներկայացուցիչներ, ուրեմն համապատասխան թւի (23-ի) —կէսից պակաս։

Նախ քան ընտրութիւններին անցնելը ժողովում սկզբունքային հարց դրւեց, թէ արդեօք ցանկալի՞ է ընտրութիւններ կատարել և այդ առիթով ծխական ժողովները ինչպիսի յանձնարարութիւններ են տւել։

Պարզւեց, որ չորս ծխական ժողովների ներկայացուցիչներ (Ն. Թաֆչեան, Խանոյեան, Ցոլաքեան, բժ. Ռամիկեան)—լիազօրութիւն են ստացել ներկայանալու այդ ժողովին ոչ թէ ընտրութիւններ կատարելու, այլ բողոք յայտնելու իշխանութեան բռնած ընթացքի և այդպիսի ապարդիւն ու խարուսիկ «խաղաղարար» մասնաժողովների դէմ, որոնք դրական ոչ մի հետևանք չունենալով՝ թմրեցնում են ժողովրդի գիտակցութիւնը և հնարաւորութիւն տալիս ոճրագործ կառավարութեանը դիւային ծրագիրն իրագործելով հանդերձ «խաղաղարարի» ծիրանիով ծածկել իր արիւնոտ գործերը։

Միւս եօթը ներկայացուցիչները—(բժ. Սահաֆեան, Ա. Բալանթար, Հ. Առաքելեան, Մ. Աթարբէգեան և այլն)—համաձայնելով հանդերձ, որ այդ մասնաժողովները ցանկալի դերը չեն կատարում, այնուամենայնիւ պնդում էին, թէ անհրաժեշտ է ընտրութիւններ կատարել, նորից փորձերը շարունակել, որովհետև կառավարութեան հետ կապ միշտ էլ պէտք է պահպանել։

Բօյկօտի կողմնակից ներկայացուցիչները նորից չշեղեցին իրենց ծխականների մտքերը և խիստ քննադատութեան ենթարկելով գոյութիւն ունեցող «խաղաղարար մասնաժողովների» և «պոլիտական յանձնաժողովի» անցեալ գործունէութիւնը, փաստերով ցոյց տւին նրանց բացասական կողմերը։

—Բաւական է վերցնել, ասում էին նրանք ի մէջի այլոց, վերջին թարմ օրինակները։ Վարանդայում կատարւած բռնութիւններն ու սպանութիւնը քննեց, հաստատեց «խաղաղարար մասնաժողովի» նախագահ Վէյդէնբաումը, բայց չարագործները դարձեալ անպատիժ մնացին։ Աղդամում տասնեակներով հայերի գերեցին ու կտորեցին, բայց իշխանութիւնը դարձեալ մի կտոր քայլ չարեց գոնէ կենդանի մնացածներին ազատելու, թէև «խաղաղարար մասնաժողովը» շարունակ դիմումներ ու պահանջներ էր անում այդ մասին։ Նոյնիսկ Գօլօշչապօվն էլ դեռ ոչինչ չէ արել, թէև նա մեկնելուց առաջ հեռագիր էր տւել, թէ որտեղ են պահւած հայ գերիները...— Վերջապէս խնդրած նպաստի մերժումը, Երևանի և Սուրմալու վերջի դէպքերը—բոլորը, բոլորը ցոյց են տալիս, որ այդ մասնաժողովները միայն ծիծաղելի խաղալիք են ոճրագործ իշխանութեան ձեռքին և ուրիշ ոչինչ։

Այդ բոլորից յետոյ չը պէտք է շարունակել նոյն կօմեդիան, այլ միայն բուռն բողոք պէտք է յայտնել, թողնելով ոճրագործ իշխանութիւնը առանց «խաղաղարար» վարագոյրի, իր մերկ արիւնոտ—ծրագրով ու դաւերով...»

Հակառակ կողմը դարձեալ պնդում էր, թէ անհրաժեշտ է ընտրութիւններ անել։ Այդպիսով վիճաբանութիւնները շարունակւեց մինչև գիշերւայ 12 ժ...

Վերջը որոշեց յետաձգել ժողովը և հետևեալ շաբաթում մի անգամ էլ գումարելով բացակայ անդամների հետ միասին տալ վերջնական որոշում։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ *)

28/10 մայիս 1896 թ.

Ամբողջ Վասպուրականը մայիսի սկզբից նորից մտաւ յուզման շրջանի մէջ։ Գրեթէ ամեն օր, առանց բացառութեան, խուզարկութիւնների դէպքեր, սպանութիւններ տեղի են ունենում։ Արճէշից մեր նոր վերադարձած ընկերը պատմում է, որ յայտնի Էմին փաշայի հայր՝ Հասան աղան մի խումբ համիդիէներ է ղրկում Խաչերով գիւղի վրայ, որոնք մի բաց երեսապաշտ սպանելուց յետոյ, յափշտակում են մնացած հայերին գերութեան տանել. Հասանի դիտաւորութիւնն է այդ գեղեցիկ հագում քրդեր բնակեցնել։ Քիւրդերը դարձեալ յարձակւում են Ցարութիւն գիւղի վրայ, ուր սպանում են դարձեալ մի հայ։ Մի Դարման գիւղացի իր եղներով կորանից դաշտում, քաղաքի մօտ սպանեց Հայոց Ջորի Բերդակ գիւղից մի հայ։ Կարճ. ամեն տեղ նահանգի մէջ քիւրդերն ու թուրքերը 95 թ.ի աշնան ոգևորութեամբ շարունակում են անտանելի անկարգութիւնները։

Այժմ ամենքիս ուշադրութիւնը գրաւած է նոր ձևի սոսկալի խուզարկութիւնը։ Երեխ դա Վանի նոր մատնիչների հանճարն է, էլ ինչ երեխ, իսկ և իսկ հայ մատնիչների գործն է։ Անշուշտ առատ կերպով դրանց հետ հաշիւ կը մաքրեն։ Ծանր խուզարկութիւններ տեղի ունեցան Հայոց Ջորի Բերդակ գիւղում կուսակալազում, Վարագ վանքում, Շուշանց գիւղ, Վարագ լեռ, Կոզրան գեղ և այլն։ 300-400 զօրքով շրջապատում են ամբողջ գիւղը կէս գիշերին և լուսաբացին սկսում խուզարկութիւն, հայ գիւղացու մօտ մնացածն էլ լափելով ու գողանալով։ Այս նոր ձևի խուզարկութեան նպատակն այն է, որ գիւղերում կամ քաղաքում հայդուկներին կարողանան ձերբակալել։ Բայց այդ սուլթանի բերնից հեռու է։ Մինչև այժմ դեռ չէ յաջողւած։ Փակւածի մէջ ասենք, որ պատահած տեղն էլ միջոց են տալիս հայդուկին դուրս գալու շղթայից իրենց վախից՝ կառավարութիւնը մի բանով օգտւում է, դա այն է, որ ժողովուրդը սոսկալի խուզարկութիւնների պատճառով ընկած է սարսափի մէջ։ Այս ընթացքով յեղափոխականների գիւղութիւնները պակասում են, բայց հոգ չէ։

† Պետօ

ԿՈՒԻՒ ՑԵՍՈՑ *)

Վան, 26/8-ին յունիս 1896 թ.

Մօտ չորս շաբաթ կը լինի, որ մեր գիւղանները խառնւած է ու մեր յարաբերութիւնները խանգարւած։

Վանի սոսկալի կռիւը սկսեց յունիս 3-ին, երկուշաբթի օրը ժամը 4-ի (ե. թ.) մօտերը և շարունակեցաւ մինչև 12 օր. դեռ կը շարունակէ քաղաքում մէջ։ Մեր դիմադրութեան շնորհիւ կոտորածը գրեթէ դադարեցաւ քաղաքի Այգեստան մասի մէջ։ Կառավարութիւնն է գործող մեր դէմ։ Առաջին օրից խուժանի միջոցով և զօրքու գաղտնի մասնակցութեամբ, իսկ յունիս 5-ին մինչև ուժը յայտնի կերպով։

Կառավարութիւնը անգլիական հիւպատոսի միջոցով, յունիս 7-ին պահանջեց անձնատուր լինել, զէնքեր, գիրքեր և գլխաւորներ յանձնել։ Մենք թէև բացասական պատասխան չը տւինք, բայց ժամանակ պահանջեցինք։ Միւս օր, յունիս 8-ին, արշալոյսին սկսեց թնդանօթներով ռմբակոծել Այգեստանը, համիդիականներ արդէն անհամար լցւած էին։ Կանոնաւոր զօրք և մահմեդական խուժանն ալ միւս կողմէն։

Այդ բոլորը մեզ երբէք վհատութիւն չը պատճառեցին. կատաղի կերպով դիմադրեցինք մինչև երեկոյ։ Այդ օր մինակ երկու զոհ տւինք մեզմէ, իսկ թշնամուց երկուհարիւրէ աւելի։ Մեր դիրքեր հետզհետէ մեր ձեռքէն ելնելով, երեկոյեան մութին քաշւեցանք լեռ։ Ցաջորդ երկու օրեր կառավարութիւնը այրեց չորսհարիւրէ աւելի տներ, քիւրդերն ալ թալանեցին ուզածնուն պէս։

Կոտորածի ճիշտ հաշիւը չը կայ տակաւին։ Այգեստանի մէջ հայերու և թշնամիներու կորուստը կը կարծի լինել դէմ առ դէմ 3—400, իսկ գաւառները անպատմելի կերպով կոտորւում են։ Ո՛չ մէկ գիւղ ազատ մնացած է, ինչպէս կը լսւի։

Լեռ քաշւելէն 10 օր վերջ Պետօն մեծ խումբ մը հայդուկներով մեկնեցաւ դէպի... տակաւին ո՛չ մի լուր։ Դումանն ալ բացակայ է, անոր ալ կը սպասէինք։

† Վազգէն

*) Արտատպւած են «Դրօշակից»։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇՈՒՄ

Շուշի, 31 մայիսի

Նորից մեր երկնակամարի վրայ կուտակւում են մութ-մութ ամպեր... Նորից արեան ու կոտորածների անյագ սատանան իր մահասփիւռ թևերն է տարածում մեր անբախտ երկրի բոլոր անկիւններում...

Նոր կոտորածները սպառնում են սկսել ամեն տեղ... (եթէ արդէն չեն սկսել)...

Աղդամի գերւածների և գիւղերի խնդիրը դեռ քննւում է, խաղաղարար մասնաժողովի անդամները, կեանքի բեմի այդ լուրջ կօմիկները չը գիտեն ինչ յօյսերով «փայտօն» նստեցին գնացին... Թէ ո՞ւր, այդ էլ միայն իրենց է յայտնի...

Իսկ այդ բոլորէն քաղաքի հայ ազգաբնակութիւնը լուռ յուզմունքի մէջ խեղդւում էր. Ղայբալի-շէնի մօտ սպանւած են նոյն գիւղացի չորս հոգի...

Երէկ... երբ մութը կոխել էր մեր երկիրը, բարակ անձրևը մաղւում էր առանց այն էլ արեամբ ու արցունքներով խմւած մեր երկրի վրայ... Կարծէք երկինքն էլ էր լալիս մեր բախտը...

Մթնել էր... Ձը կային շատ արհեստաւորներ, որոնք թուրքական թաղում գնացել էին աշխատելու, մի կտոր սև հաց ձեռք բերելու...

Ձը կային նրանք, որոնք միշտ ուզեցել են խաղաղութիւն և միշտ խաղաղ են...

Ո՞ւր են նրանք: թէև յայտնի չէ, միայն իրենց ամուսիններին ու որդիներին սպասողները յայտնելը կարած սպասելուց, վազում են դէպի ժողովարան, դէպի կլուբ, համոզւած, որ քաղաքի իշխանները կանաչ սեղանի շուրջը իրենց անվերջ արշաւանքները սկսած կը լինեն... թէև այնտեղ ժողովուրդն է կոտորւում, արիւնն է հոսում անվերջ ու անհատնում...

Հեկեկանքների և հառաչների մի մեծ ամբոխ է, կանացի մի մեծ խումբ, որ կլուբի առաջ հաւաքւած, իրենց յօյսերը դրել են իշխանների վրայ... սրանք կազատեն իրենց սիրելիներին, որի ամուսինն, որի որդին, որի ջահել-ջիւան եղբօրը...

Ահա արդէն մութ է, և գերւածների մի խումբ առաջնորդութեամբ ինչ որ թուրքի և մի բիւրօկրատ-չինովնիկի... մտնում է մեր կլուբն...

Բոլորը ճչում են ուրախութիւնից, վերջապէս ազատ են գերւածները, խաղաղ է քաղաքը... բայց ոչ ազատւածները բռնւածների մի մասն են միայն և գուցէ մի փոքրիկ մասը... Էլի են պակասում մարդիկ, 15 թէ 20 հոգի միայն քաղաքից... հապա գիւղերի՞ց: Փայտափայտ, ամբողջական խառն ու զանազան կանչերէն ծախողները, որոնք թուրքական թաղով պիտի անցնեն, իրենց գիւղը գնալու համար... Յայտնի չէ նրանց թիւը, յայտնի չէ նրանց վիճակը... Շատերն են բռնւած, պարզ է միայն այդ...

Լարւած դրութիւն է...

Խումբ-խումբ կանգնած. յուզւած օրւայ դէպքերից—մենք զրուցում էինք։ Մեր զրոյցը ցաւ էր, մեր խօսք—խաղաղութիւն...

Բայց այլ կերպ են մտածում մեր թուրք հարևանները՝ իշխանութեան պրօվոկացիայից քաջալերւած։

Շահէն

ՄԵՐ ՑԱՒԸ

Արդուին, 15 մայիսի

Ահա մօտ երկու տասնեակ տարի է ինչ քահանայական հարցը ներս է մտել մեր մէջ և կատարելապէս ուժասպառ է արել։ Երկու տասնեակ տարի է ինչ ուզեանց եւ չուզեանց թայֆաները գործում են իրենց ամբողջ թափով։ Հոգևոր կառավարութիւնը այս բոլորի վրայ միայն հեռւօրէն է նայել և չի աշխատել երբէք վերացնելու այս պառակտման պատճառները։ Սեդրակեան Արքեպիսկոպոսից յետոյ եկող թեմակալներից ոչ մէկը չի մտածել սրա մասին և չի աշխատել գոնէ մի կերպ, եթէ ոչ մշտապէս գոնէ, ժամանակաւոր խաղաղեցնել պղտորւած մտքերը, այլ դրանց փոխարէն՝ իրենց ուղարկւած քննիչներով աւելի եւս գրգռել են այս կամ այն մասը և դրանով աւելի վնասել խաղաղացման գործին։ Ժողովրդի բողոքներով և տեսակ-տեսակ փաստաթղթերով լցւել են կոնսիստորիայի և ս. Սինոդի արխիւները, բայց ո՞վ է լսողը, ո՞վ կատարողը։ Թեմակալներից ոչ մէկը չի մտածել այցելել իր թեմը, ի միջի այլոց և մեր քաղաքը, և անձամբ վերջ դնել այդ իրար դէմ մղւած եղբայրասպան դաւերին, որոնց խիստ պատճառները, եթէ թոյլ կը տրւի մեզ ասել, հէնց իրենք են առաջ բերել։

Մօտ երկու տարի է, ինչ, կարծես թէ, դադարել էր այդ հարցը, բայց մի վերին ատեանի, ոչ մէկին պատւէր չը բերող դէպք, որ տեղի ունեցաւ անցեալ մարտի 19-ին վերանորոգեց հինը և մեր ժողովուրդը գտաւ իր զբաղւելու սովորական ասպարէզը—դաւեր լարել իրարու դէմ։

Այն ժամանակ երբ մեր ուրիշ քաղաքները պատրաստում են թէ իրենց և թէ իրենց եղբայրների վէրքերը բուժելու, երբ մեր եղբայրները և համայն Ռուսաստանը երկունքի մէջ են, երբ մեզ հարկաւոր է մեր գոյքի, պատւի և կեանքի պաշտպանութեան մասին մտածել—մենք զբաղւած ենք միայն փթած քահանայական հարցով։

Ձ՞ որ մենք արիւն չենք թափում... Մենք շատ հանգիստ ենք։ Ուրեմն պիտի պարապենք այդ օրինակ հարցերով։

Բայց ինչ կասի մեզ մեր եղբայրը, որ մեզ համար տանջւում, արիւն է թափում. ինչ կասի հայը, որը չողած դուռն է բաղխում... Ձ՞ ասի՝ թող եղբայր այդ բոլորը, արիւնաքամ եմ լինում, տուր ինձ սպեղանի, որ վէրքերս բուժեմ։

Մի՞թէ կը թողնես, սիրելի հայրենակից, նրան անպարգև։

Վերջին օրերս տեղս ժամանեց Գօրուս յաջորդ Խորէն վարդապետ Մուրադբէգեանը, որի այցելութիւնը շատ լաւ ազդեց խաղաղացմանը։ Երիտասարդ վարդապետի եռանդուն և խաղաղասէր միջոցներով երկու թայֆաները իրար հետ հաշտւեցին (?)։

Ժողովուրդը շատ լաւ ընդունեց երիտասարդ վարդապետին։

Բատն տարւայ ընթացքում առաջին անգամն էր, որ լսեցինք ազատ վեղարաւորի արճաճէ խօսքերը՝ առաջին անգամն էր, որ հոգևոր հայրը եկեղեցու բեմից կոչ էր անում թողնել քահանայական և նրա նման հարցերը և զբաղել մեր ցաւերով, պատկերացնելով այդ ցաւերը իրենց բոլոր մանրամասնութիւններով։

Հեռացաւ հայր սուրբը՝ տանելով մեր բոլորի գոհունակութիւնը և խոստանալով խաղաղութիւնն ամրապնդել իր յաճախակի այցերով։

Ցաւում ենք, որ երիտասարդ վարդապետը ճշտապահ կը լինի իր խոստման մէջ։

Սերմնացան

ՎԱՆՔԻ ՈՒ ՃԵՄԱՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Վաղարշապատ, մայիսի 27-ին

Վեհափառն ընդունեց ճեմարանի տեսուչ Գարեգին վարդապետի հրաժարականը և այդ պաշտօնը առաջարկեց Մեսրոպ վարդապետին։ Սակայն վերջինս պատասխանել է, որ կարող է ճեմարանի տեսչութիւնը յանձն առնել միայն այն դէպքում, եթէ իրեն ընտրէ... Էջմիածնի միաբանութիւնը, և այս իր տարօրինակ պայմանը բացատրում է նրանով, իբր թէ այդպէս է արտայայտւում Կաթողիկոսի վերջին կոնդակը եկեղեցական սահմանադրութեան մասին։

Միթէ Մեսրոպ վարդապետը կոնդակը չէ հասկացել. այնտեղ ժողովրդի իրաւունքների մասին է միայն ասւած, և ոչ թէ վանականների։ Եւ միթէ Մեսրոպ վարդապետի կարծիքով ճեմարանը մի վանական դպրոց է, որի վարիչը վանքի միաբանութիւնն է։

Ո՛չ. այդպէս երբէք չէ եղել, չը պիտի էլ լինի։ Մինչև այժմ ճեմարանի կառավարութեանը միջամտել են միմիայն մանկավարժական խորհուրդը և ինքը Վեհափառը։ Իսկ այսուհետև նոր սահմանելիք կարգերի համաձայն, ճեմարանի վարչութիւնը ենթարկւած պիտի լինի ժողովրդից ընտրւած մի մարմնի։

Մեսրոպ վարդապետից մենք իրաւունք ունէինք սպասելու, որ նա ժողովրդի իրաւունքների և լուսամիտ կարգերի պաշտպան և հետևող լինէր, և ոչ թէ ինչ որ պատահական և մեծ մասամբ անուս կամ թերուս «միաբան եղբայրների» իշխանութեանն ենթարկել տար ճեմարանի բախտը, որը մի միջնակարգ և բարձրագոյն դպրանոց է։

Լսում ենք, որ ճեմարանի ուսուցչական մարմինը մի նախագիծ է կազմել և ներկայացրել Կաթողիկոսին։ Այդ նախագծով ճեմարանի տեսուչը պիտի ընտրի մանկավարժական խորհրդից։ Մեզ թւում է, որ նոյն իսկ եթէ այդ նախագիծը Վեհափառի հաւանութիւն գտնի, դարձեալ վերոյիշեալ կէտը տեսչի ընտրութեան վերաբերեալ այժմ չէ կարելի իրագործել։ Որովհետև ներկայումս ճեմարանի ուսուցչական կազմը բոլորովին կազմալուծւած է և բացի դրանից խիստ վարկաբեկւած. մի՞թէ այս կազմի օրով և այդ կազմի դէմ չէին այն բողոքներն ու դժգոհութիւնները, որոնց հանդիսատես էինք մենք ամբողջ անցած ուսումնական տարին։ մի այսպիսի ուսուցչական կազմ ոչ թէ ճեմարանի վրայ իշխելու յաւակնութիւն պիտի ունենայ, այլ հրաժարական տայ, հետևելով իր տեսչի օրինակին։

Վեհափառի կոնդակով եկեղեցու պաշտօնեաներին ընտրելու իրաւունքը վերադարձւած է ժողովրդին, և անշուշտ շուտով ժողովուրդը ստանձնելու և ձեռնարկելու է իր այդ իրաւունքից օգտւելը։

Այս ի նկատի ունենալով Հաշտարխանի թեմական Առաջնորդ Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակեանը ներկայացրել է Վեհափառին իր հրաժարականը։ Ողջունելով սրբազանի այս նուրբ սահմանադրական քայլը, մեր համեստ ցանկութիւնն ենք յայտնում, որ նոյնպէս վարւէին նաև նրա պաշտօնակիցները և եկեղեցական-դպրոցական բոլոր պաշտօնեաները՝ ժողովրդին ազատ հնարաւորութիւն տալու, որ իր իրաւունքները գործադրէ և միևնոյն ժամանակ իրենց էլ զալիք անախորժ վիճակից ազատ կացուցանելու համար։

Լսում ենք, որ նոյնպիսի հրաժարական տւել է նաև Բագւի գործակալ Զաւէն վարդապետը։ Դժբախտաբար մնացում հրաժարւում են նրանք, որոնց կողմն է ժողովրդի համակրութիւնը. իսկ նրանք, որոնց դէմ ամենաբուռն ու ամենակտրուկ դժգոհութեան ձայներ են լսւում և ցոյցեր են կատարւում, բոլորովին զուրկ լինելով ներքնազգացութիւնից չեն ուզում բաժանւել իրենց «տաք» պաշտօններից։ Սակայն ժամանակները փոխւելու վրայ են. ժողովուրդը կը գործադրէ իր իրաւունքը և անարժանները այլ ևս չեն մնայ իրենց անհամապատասխան տեղերում։ Միայն թէ ժողովուրդը կատարէ իր պարտքը դէպի եկեղեցին և անտարբեր չը լինի եկեղեցական-ժողովրդական շահերի վերաբերմամբ։

Թաւրիզից դիմել են Կաթողիկոսին, որ այնտեղ ազգային գործերը երեսի վրայ են մնացել, և խնդրում են մի եպիսկոպոս ուղարկել։ Ամառը Նաւասարդ եպիսկոպոսին էին Ատրպատականի առաջնորդ ընտրել. բայց գործը դարձեալ մնում է առկախ։ Ինքը Նաւասարդ եպիսկոպոսն էլ, ինչպէս պատմում են, իր չը գնալը պատճառաբանում է նրանով, որ իրեն ոչ մի պաշտօնական դիմում չէ եղել այդ մասին։ Տարօրինակ բան. եթէ իրօք ընտրութիւնը եղել է և Նաւասարդ եպիսկոպոսը ընտրւել է, ինչպէ՞ս է որ ընտրող ժողովը այդ մասին ուր հարկն է պաշտօնապէս չէ դիմել կամ այդ դիմումը անհետևանք և անգործադրելի է մնացել։

Ա.

ԸՆԹԱՑԻԿ ԿԵԱՆՔԻՑ

Եկատերինոդար, 23 մայիսի

Անդրկովկասը արիւնում է ողողւած, իսկ Հիւսիսային Կովկասը համեմատաբար անդորր դրութեան մէջ է. այստեղ «Ընդակների» ժամանակն է, նրանց լեզուն է տիրապետում, իսկ այստեղ նոյն իսկ հնարաւորութիւն ունենք կուլտուրական գործերով զբաղւել։ Մեր նահանգն է, որ համայն Ռուսաստանին դահճներ է մատակարարում. որոնք պատերազմի դաշտում, ուր նրանց դիմաց կանգնած էր լաւ պատրաստւած արտաքին թշնամին, իրենց թիկունքն էին ցոյց տալիս, բայց այստեղ իրենց հայրենիքում ամենաանդութ մարտիկներն են, բոլոր անէծքը վաստակողները մեր արիւնաքամ հինգեր կօզակներն են։ Եւ անշուշտ նրանց ծնողավայրը համեմատաբար «հանդստութիւն» է վայելում—հանդստութիւն որ աւելի մեռելութեան է նման։ Երկար չէ կարող տևել այդ նիրհը, բայց առ այժմ մեռելակը միշտ պատրաստ է և հնար աւելի կատաղած խաղում մարդկային մարմնի վրայ, երբ խաղացողը այս ձևն ամեն տեղ հակառակ ստացած [illegible], որ իր անաջողութեան վրէժը լուծում է «յեղափոխականից» տառապելով ու բիչ առաջ ինքն էլ ծառայում էր ազատութեան կարմիր դրօշակը։

Ընդհանուր նիրհը կարծես այստեղի հայերի մի մշտական յատկանիշն է։ Ոչ ժողովրդի յաջողութիւնն է նրանց հետաքրքրում, ոչ ազգայնական կեանքը, ոչ հասարակական պահանջները, ոչ մի բան չէ հետաքրքրում մեր «հանդստասէր» հայերին. միայն մի բան ձգում է դէպի ինքը սեփական հայերին—դա տեղական եկեղեցին ժողովարան է, որի նշանաւոր մասը հայերն են կազմում։ Այնտեղ կանգնաց սեղանի շուրջը միշտ բոլորած են մեր հայերը։ հայերով է իր գոյութիւնը պահպանում այդ ակումբը, հայերի փողերն են կենդանութիւն տալիս այդ «օգտակար» հաստատութեան. չեմ չափազանցում եթէ ասեմ որ 20—25 հազար հայերն են տարբեր տալիս այդ «պլիտօնին», 20 հազար տարեկան և դա ոչ թէ մի կամ երկու տարի, այլ շարունակ երկար շարք տարիներին։ Այդ ակմբանոցի օգուտը չի երևում, իսկ վնասը զգալի է, մանաւանդ նրանց համար, որոնք երբեմն նժոյգներ են ունեցել իրենց տրամադրութեան տակ, ունեցել են 20—25 ծառայող, ահագին գործ, [illegible], իսկ այժմ միայն այդ ակմբանոցի կանանց սեղանը իր «ընծայեփերով»։ Այդ կեանքով ազգը մարդկանց դժւար է տեսնել շարժել, կուլտուրական գործերով զբաղեցնել, մանաւանդ այժմ, երբ հասարակական տրամադրութիւնները այլ ևս «[illegible]» չունեն, երբ նրանց ազգային վերաբերմունքը միայն վիճաբանութեան է հանդիպում և նրանք լռելեայն ասպարէզը թողնում ու հեռանում, նոյն իսկ աշխատողներն մտածել, որ երբեմն բացառում էին փառաւոր սեղանի շուրջը և առանց նրանց ըմպածանքի ոչ մի գործ չէր կարող իրականանալ. այժմ նրանց մասին չեն մտածում, դա նոյն իսկ անախորժ կը լինի, եթէ այդ հնամեայ մարդիկը նորից ասպարէզ իջնէին և միևնոյն ժամանակ դժւար թէ որևէ բան կարողանային անել, այժմ նոր մարդիկ են, նոր գաղափարներն են տիրապետում։

Այստեղ, ի հարկէ, միակ ասպարէզն է դպրոցը, ուրեմն որևէ աւելի ընկնող գործ չը կայ, պէտք է դպրոցը օգտակար հիմնարկութիւն դարձնել և այդտեղ պէտք է մարդիկ պատրաստել։ Սակայն դպրոցը էլ շատ չնչին նշանակութիւն ունի, քանի որ չորս կողմ պետական դպրոցներն են, իսկ հայոց դպրոցը լցւած է միմիայն աղքատ դասակարգի զաւակներով։ Դպրոցը ապահովւած չէ. ծախսերը առ այժմ ծածկւում են նոր մտցւած «դպրոցական տուրքով» և յոյս կայ, որ այդ տուրքը մշտական լինի, մանաւանդ, որ նոյն տուրքից ծածկւում է պետական դպրոցներում մեր յետամնաց ուսուցչի ռոճիկը։

Այժմ եկեղեցական-դպրոցական գործերը վարում է հոգաբարձութիւնը։ Հոգաբարձուներից մէկը հրաժարւած էր իր պաշտօնից, իսկ միւսը անձնաւորութիւն էր գործել, այնպէս որ մնացած հոգաբարձուները ընտրւել և առաջարկեցին ծխականներին ընտրել երկու նոր հոգաբարձուներ իրենց [illegible]։ Ժողովը կայացաւ միայն 2-րդ անգամ. ընտրւեցին ժամանակակից մարդիկ՝ Նախկին ուսուցիչ Վ. Նալբանդեանը և վաճառական Ց. Բաղդասարեանը։ Այդ ժողովին հոգաբարձու Ն. Սաֆրոնեանը առաջարկեց գոնէ սկզբունքով ընդունել որ հայուհիները և 21 տարեկան երիտասարդներն էլ իրաւունք ունենան գործին մասնակցել, և այդ առաջարկը երկար վիճաբանութիւնից յետոյ միաձայն ընդունւեց. այնպէս որ յոյս կայ, որ յետագայ կայանալիք ժողովներին [illegible] կը տեսնենք և հայուհին էլ կարող ձայնով, մանաւանդ երիտասարդութիւնը։

Միայն չը պէտք է թաքցնել մեր ժառանգութեամբ առաջնորդւել. այս անգամ չը նայելով որ պարզ նկատւում էր ժողովականների ցանկութիւնը կանդիդատների վերաբերմամբ — մի

կոմֆօրտով։ Ինչ փոյթ. երկրում ալրդ արհավիրքներից ազատ, ազատով է զգում իրեն Թրանսկայի մայրաքաղաքում։ Մեքենաների ահեղները պատում են աղմուկով և նորա համար միատոնա պատրաստում Իակ գունատ գիշերները... Թող ասելի գոնջատեն. Ներսխանան համար՝ միանգամայն անհետաքրքիր է ՔՀ ինչպես դավադիրն են փորձիչների առոյգ կարմիր այտերը...

Եւ մի չար ցանկութիւն զարթնում է մէջդ. տեսնել Ներսխանանների գործարանները ՔՀըքաքան հօրդանների ձեռքով հիմնայատակ արած. խոտոտված եմ, ուրախների շուքնակցաների հանդէպ՝ բաւականութիան մեզմ զոյը կըզգայի ես. վայրենի ցանկութիւն՝ կապիտալիստի վայրենութեան դէմ։ Ի՜նչ արած. բոլշևական պարագի քաղորդներ կարգալ Ներսխանանների գլխին—անմտութիւն է։

Տասներկու ժամ հինգ-վից, եօթ-ութ-ին կօպկի Անիները գործում են շարունակ։ Երեխաների գնդերը հետ-ում են իրենց բերը տալում է Պարիզում...

Հէյ աշխարհ։ Վալտ

ԿՐՉԵՑՈՒՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Դժբաղդ կրչեցիները Թիֆլիս եկած ժամանակ չամենայն դէպս մի որոշ իմանքի տակ էին. Նպաստամատոյց յանձնաժողովը տեղծել էր նրանց համար մի քանի յարմարութիւններ, որից յետոյ նրանք և կանոնաւոր ընակարան ունէին և անդադար կերուխում և նորի իակ հանձնէին։

Երբ վերջին անգամ այցելեցինք նրանց՝ գտանք մի տեսակ յուսահատ դրութիան մէջ։ որովհետև նրանց յայտնել էին թէ մարտի վերջին մեկնելու են Շամշադին գաւառամասը և տեղաւորելու են այնտեղի հայկական գիւղերում։ Ցնուսահատութիան պատճառն այն էր, թէ՝ քաղաքի բարեգործ յանձնաժողովը իրենց մի տեսակ գլխիցը ուղ է անում։ Նրանց բոլորը նպաստում էին հինգ ու հնսանան Թիֆլիսից, այնուհետև իրենք կը մոռանան և կը ձեան նորնակ օրական հայել կարօտ, որովհետև Շամշադինը հազիւ կարոտանում է իր թշուառ օրերի հոգսը քաշել՝ ուր ձեաց եթէ իրենք էլ ուելանան նրանց վերայ։

Զը նայելով պաշտօնապէս կրչեցիներին յայտնած էր ՔՀ նպաստամատոյց յանձնաժողովը ամէն տեսակ նպաստատրամադրիւթիւնից դադարեցնելու, բայց և այնպէս նոքա բոլորը դժւարանում էին հաւատալ։

Որոշումը կատարեց, կրչեցիները դնացին և ամա հազիւ անցել է մի ամիս և նրանք մոռացել են թշուառների հետաքրքրիւթիւնը իրանցից։ Այդ հասած տուէդ տեղեկութիւնից պարզում է, որ նրանք միացել են մերձաւոր շամշադինցոց «Հայրն ու Լջեին» այն էլ այս ամսում ընթացքում Բարեկործ պարոնների հոգսն ըստ իրենց հանգստութեան տեղատրեն մի կերպ և ապրուստնուն միասս բարու։

Ո՛չ պարոններ, հայ ժողովուրդը աշխարհիս գրեթէ բոլոր անկիւնները ոտքի է թշուառականների օգտին իր լուսան ուղարկից ձեզ, դուք էլ մի թեկուզ նրանց համար անել ինչ։

Ի՜նչ ունեն շամշադինցոց մէջ առաջացած զգացողութիւնը՝ եթէ նոր արտասուք ընդունէ՝ կորուստ է պատրաստում անազան ազբատների համար։

Ծակ. Ազաթար.

ԳԱՐՁԱԿԱՆ ԲՈՂՈՔ

Վլադիքաւկաս, 21 ապրիլի

Թերէքի և Դաղստանի հոգաբարձական և ուսուցչական խորհուրդների ներկայացուցիչները, հաւաքուած Վլադիքաւկաս քաղաքում այս տարւոյ ապրիլի 20-ին, կայացրին հետևեալ որոշումը.

«Ի նկատի առնելով այն, որ մայիսի 7-ին Ն.Ժ.մեծութիւն կայսեր ազգային տարեդարձի տօնակատելու են ոչ ընդհանուր, հաւասար, գաւառի և ուրդակի ձայնատուութեամբ ընտրած ժողովրդի լիազօր ներկայացուցիչներ, այլ հոգաբարձական և ուսուցչական խորհուրդների պատգամաւորներ և նշանակուի մարդիկ, որոնք բնաւ չեն կարող համարել ժողովրդի իսկական ներկայացուցիչներ, հետևապէս և չեն կարող ժողովրդի իսկական պահանջների արտայայտիչ հանդիսանալ—ժողովը միաձայն վճռեց յիշեալ համագումարը համարել ոչ իրաւական։ Ընտրելով երեք պատգամաւորներ ներկայ լինելու այդ համագումարին (եթէ իհարկէ հակառակ ժողովրդի ցանկ բողոքների անհատականութիւնները կայանայ համագումարը), ժողովը պարտաւորեցրեց նրանց ամենակարճով կերպով բողոքելու այս մեր բիւրոքրատական հանգամանքի դէմ և պահանջելու ըստ կարելւոյն շուտափոյթ հետևելի ընդհանուր գաղտնի, հաւասար և ուղղակի ձայնատուութեամբ ազնիւ սեռի, և դասակարգի ներսիդներին 20 տարեկանից անց ժողովրդից ընտրած ներկայացուցիչների կազմած համագումար, որը միայն լիակատար իրաւունք կունենայ քննելու և հաստատելու բոլոր հայ գաղթականների համար ծրագիր և կանոնադրութիւն։

Պատգամաւորներ՝ Ղազարոս Տէր-Գրիգորեան, Արտաշէս Չիլինգարեան։

ԼՐԱՏՈՒ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վան

Վանից եկողները հաղորդում են, որ 12—15 օր սրանից առաջ քաղաքում խռովել էին քաղմաթիւ քիւրդերը Օգուստով ընդհանուր փոթորկից, նրանք ուզեցին յարձակուել շուկայի վրայ, բայց յետ մղուեցին զօրքի կողմից։ Զը նայած տեղական վարչութեան այդ քայլին, հայ ազգաբնակութիւնը յուզման մէջ է, քանի որ քրդերը չեն հեռացած քաղաքից։

Թշնամութիւնը Վասպուրականի շրջանում օրէցօր աւելանում է. հայի դէմը նորից բարձրացել է։ Զը նայած ձմեռային փոխման, թշնամութեան գազանակերպին հասած ազգաբնակութեան երիտասարդ մասը մորնում է մայր երկրը։ Թիմար գաւառից միայն վերջերս Թիֆլիս են հասած 150 հոգուց աւելի։

Թիֆլիս, ապրիլի 28-ին

Կէսօրին մօտիկ Թիֆլիսի ծածկած Զարսոս կոչուող փողոցում սպանուած է մի Քուրք. վէպքը իրարանցման առիթ ուեց։ Վայ հասան զօրքերը։ Շատ խանութներ փակած միացին Ռուս, վրայի և հայ ակնհայտների ասելով՝ սպանող Քուրք է, որ երեք անգամ սարճանակը արձակելուց յետոյ, փախել-անհետացել է։ Դէպքը պատճառ տեղում՝ մի քանի խանութներ կրկնած են ոստիկանութեան կողմից։ Պահանջում են ցոյց տալ մարդասպանին։

Բաքու, ապրիլի 21-ին

Երէկ, ամսիս 20-ին տեղական ոստիկանական կարգադրութեամբ փակուած էին Բալախանում ցայտնի «տավրագործների» հանձնաժողովի վրայ շինած բազմաթիւ դռները։

Սրանք այն յայտնի աւազակախմբերն են, որոնք նպատակել հայ-թուրքական անմիտ կռուողներին։

Փակման պատճառները դեռ անյայտ են բոլորի համար, ենթադրում են որ կառավարութեան կարգադրութեամբ է. ինչ ուզում է լինի, գոնէ սրանից յետոյ յոյս կունենան մարդիկ, որ մասամբ ապահովուած են...

Չին-Նախիջևան, 25 ապրիլի

Ընարելեցին գաւառական խորհրդարար յանձնաժողովի անդամները Թուքք-հայկական ընդհարումների առիթու հայերի կողմից ընարելցին պ. պ. Բաթան Մելիք Բաթանեանցին, Պաւել Տէր-Գրիգորեանն և Ստեփան-Բէգ Դաւդարբէգեանն Թուրքերի ընարածները դեռ յայտնի չեն։

Երեկոյեան մի հայ է անյայտացել և մինչև այժմ էլ դեռ չէ գտնւել։ Նա կառչի առնելու եր գնացել Թուրքական մասը։ Գուատը խաղաղ է։

Ելևան, ապրիլի 26-ին

Ապրիլի 24-ին Լոբլինսկի պուղ երբորդ հարիւրեակի 6 գօտիները Նախնցին մի երկաճուղային բեռնակրի, որը սանում էր մի պայուսակ և մի տնդուկ. հետևելով նրան և տեսնելով որ բեռնակիրը ներս մտաւ Թուքք Մէշտի-Սալիմ-Մէշտի Աբրաս-օղլու քաղվանատան, նրանք այդ մասին հաղորդեցին երեց հարիւրեակի գլխաւորին, որը խուզարկից քաղվանատան։ Երկար խաղալ են։ Գաւառը խաղաղ է։

Ելևան, ապրիլի 26-ին

Ապրիլի 24-ին Լոբլինսկի պուղ երբորդ հարիւրեակի 6 գօտիները Նախնցին մի երկաճուղային բեռնակրի, որը սանում էր մի պայուսակ և մի տնդուկ. հետևելով նրան և տեսնելով որ բեռնակիրը ներս մտաւ Թուքք Մէշտի-Սալիմ-Մէշտի Աբրաս-օղլու քաղվանատան, նրանք այդ մասին հաղորդեցին երեց հարիւրեակի գլխաւորին, որը խուզարկից քաղվանատան։ Երկար խաղալ են։ Գաւառը խաղաղ է։

Ելևան, ապրիլի 28, 12 ժ. 3 ր. ց.

Ապրիլի 27-ին կատարեցաւ մի վաճառքի ընարութիւն Ալայլեխայից։ 2047 ընարողներից եկել էին միայն 593-ը։ Ընարած է բժիշկ Այվազեանը։ անկուակական Դաշնակցականները չէլին մասնակցում ընարութիւններին 25-ին կատարաւ հողատէրերի վաճառքի ընարութիւնը։ Հաւրէս հինգ ընարողներից եկել էին միայն... 6 հոգի։ Ընարած է հողատէր Բայբուրթեանը։

Բուլանըխ

Բուլանըխի նոր նահանգապետ Եասլիևսկի վրայ են գրած նաև գեներալ նահանգապետի պարտականութիւնները։ Բուլանըխի նահանգի այժմեան գեներալ նահանգապետ Ալիխանօվը վերադարձած է Թիֆլիս, որտեղ նա կրսանձնի գեներալ Տիմոֆեևիի պարտականութիւնները։ Վերջինս սահմանում է մի նոր պաշտօն Թիֆլիսից դուրս։

Ղազախ, 27 ապրիլի

Գնգապետ Լեփեցկու կարգադրութիւնը, վասներին հասուցման վերաբերմամբ՝ հայերը կատարեցին 32 հայարնակ գիւղերի ներկայացուցիչները նշանակած օրը բերել էին վճարելիք դումարի $^1/_3$ մասը— 40,160 րուբլի 64 կոպ., և վերջինս համաձայնութեամբ մոտ ուեց գանձարան ի պահեստ, մինչև որ Թուրքերն էլ վճարեն իրանց բաժինը Թուրքերը առաջին երկու օրը ոչինչ չէլին վճարում ասելով չունենք, իսկ երբ Լեփեցկին նրանց պատգլուխներին բանտարկից, այսօր վճարեցին մօտ 10,000 ր. փոխանակ 75,000 րուբլու Մնացած 65,000 ր. վճարելու են ամսիս 30-ին մոտ 12-ին—համապատասխան տուգանքի հետ միասին. այդպէս է կարգադրութիւնը։

Վճռաների երկրորդ մասը—գաւառալ $^1/_3$-ը ՔՀ հայերը և ՔՀ Թուրքերը վճարելու են Մայիսի 15-ին, իսկ մնացածը աշնանը՝ սեպտեմբերին կամ հոկտեմբերին։

ԹԻՖԼԻՍ

◆Կովկասեան երկաթուղիների վարչութեան գրութիւնը, հանասկ տեղական քերթերի տեղեկութիւն, ապրիլի 27-ին չը վերացրին գեռևս այդ գրութիւնը շարունակում է մնալ ոչ միայն երկաճուղու վրայ, այլ և շատ ուրիշ տեղեր։

◆«Համայաթ» լրագրում տպած էր, որ ապրիլի 21-ին Գէօքօրճեանի մենատնտեսի վրայ երբ ՔՀ յարձակել են սօղիալիստ-Ֆեդէրալիստները և մի 100 րուբլիանոց չէկ են ներկայացրել իրենց կօմիտեի անունից վաքքի վանահօրը, պատճառով հանգամանք դէպքում սպանել Այժմ «Ճրօսնա» լրագրում տպագրած է մի հերքում սօց.-Ֆեդէրալիստների կենտ. կօմիտեի կողմից, որով յայտնում է, որ ինքը ոչ ոչ չէկերէ ուղել ոչ էլ որևէ գրքոյկներ դրամ հաւաքելու համար։

◆Երէկուայ հաւատարմատար Ա. Մ. Թրէնկելը դեռևս է Թիֆլիսի նահանգապետին է յայտնել որ ապրիլի 30-ին, կիրակի օրը, Վէրեէլէ հիւրանոցի դահլիճում, ցերեկուայ ժամը 1—5-ը կայանալու է Թիֆլիսի հոսս պատրիոտների դաշնակցականաց» ընդհանուր ժողովը, Պետական Դումայի ընտրութիւնների համար լիազօրներ ընտրելու նպատակով։

◆Այսօր, չորեք երեկոյեան Թիֆլիսի ժողովարանի ամարայէն չէնգերում, Ш թաղամի պիւռոպոլի «Ծնողական շրջանէր միջոցների» ուժեղացնելու նպատակով, տեղի է ունենալու զրօսանք՝ վիճակախաղով, մանկական ներկայացումով ու երաժշտական բաժնով։ Բարի նպատակին անդուլա պիտի գործէ այդ հետևողի մեծ խումբը։

◆Կովկասեան պօլիտեխնիկում բայ անուանի կօմիտէի կազմը Փոխարքան կարգադրել է հետևեալ ձևով։ կովկասեան զինուորական շտաբի պետերը, Կովկասի զինուորական շրջանի ինժիներների պետերը, գաղտնի խորհրդական Լ. Լ. Մարկովը, Ասկերբէգ-բէգ-Ազաքսիվիլը, զինուորական-ժողովրդական վարչութեան պատասխանատու Սարամժօնովը և Հ.Հ.Կ.Ժ.Ը.

◆«Обзоръ» Քերի խմբագիր պ. Բուքանքեանցն, հրաման առացաւ Թիֆլիսի գենեռալ-նահանգապետի կողմից, 3 օրուայ ժամանակ մէջ ոչնում հետևալ Թիֆլիսի գենեռալ-նահանգապետութեան առհանձներից։ «Весенній Поток» Քերի խմբագիր պ. Բաշկինին առացել է հրատարակի մի հրաման, որը պէտք է նա կատարէ 7 օրուայ ընթացքում։

◆Սուբսկի բանտից պատրել են բոլոր քաղաքական բանտարկիալները։

◆Թիֆլիսի նահանգապետը առացել է հերքին զորքերի մերձաքաղաքային կարգապահութեան՝ անյապաղ պէտք հատարել բոլոր պետական և զինուի պարկերը։

◆Գենեռալ-նահանգապետի կարգադրութեամբ փակել է հայր Իօան Բրիխնիչեանի խմբագրութեամբ լոյս տեսնող շաբաթաթերը, որը հրատարակում էր Встань, Спящій առնուող։

◆Ն. Ա. Սուլթան-Կրիմ-Գիրէյի փոխարէն հայկական եկեղեցական կալւածքները և գործերը վերադարձնող յանձնաժողովի նախագահ է նշանակել Կովկասի Փոխարքայի նոր օգնական պ. Ի. Վ. Միքայէլեան։

◆Այն 40 հազար ըուբլին, որ Թիֆլիսի արքունի գանձարանից տրւել էն հայ եկեղեցուն, երկու մասի են բաժանուել, որոնցից 5 հազար առանձին է Գամրեանն եկեղեցին, իսկ 35 հազարը Ներսիսեան հոգևոր դպրոցը։

◆Կովկասեան Փոխարքայի խորհրդի մէջ նորերի գործերը մեծամասնական կողմից նշանակուել է կովկասեան հետևողական յանձնաժողովի նախագահ պ. Ե. Գ. Վէդրիցկայսը։

◆Մայիսի 9-ին նշանակած է Թիֆլիսի փոխարքայի դիւանատեսական վարչի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, որը պէտք է ընարի պանեան պ. Գանդիլեի տեղ մի նոր կառավարիչ Պէտք է ընել այն հարցը ևս թէ ինչ մեղքերից կարելի է լրացնել բանկից կողմնատ գանդրը Բանկի կառավարչի Թեհրանում համարում է պ. Վ. Ս. Մէքելեանը, իսկ գերեկարի Թեհրանում պ. պ. Գ. Ս. Խաչիկովին, և Գ. Բ. Դիոգենեան։

◆Թիֆլիսի պահակազօրքի Թիւն ուժեղացնելու համար Թիֆլիս են կանչում Կութայիսի գնդի 3 բատալիօններ։

◆Երկի պայծից անզգեստկական երկաթուղու գլխաւոր արհեստանոցներում շոգեմատ մեքենաներ պատրաստելու սրա հետևանքով տասնաւոր հարիւրներ ապրուստ կունենան։ Ինչը բանտարկը կաշխատեն շոգեմ, որոնցից երեք բատալիան ամբր Քանդներ կրկնեն։

◆Ոստիկանութիւնը ցուցակագրել է 150 ապատական հիմնարկութիւններ, որոնք փակուած էին հակառակ Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեան՝ ամբ 8-ից առաջ։

ԿՈՎԿԱՍ

◆Թիմիր-Խան-Շուրան Ինչպէս յայտնի է աղբէն տեղ Քեհնամուները են հաղորդ երեք ՔՀ չորս անձնաւորութիւններ ապով Թուրքերը, բայց ինչպես երևում է ղաղաքապետին, սրդէն երեք անգամ հրատարակած յայտարարութիւններից, ժողովուրդը, ծօչով է եղծարկել Պետական Դուման, այդ բօյկոտ ասելի զգալէ է շրջանաչ վերաբերում Նորա բոլորովին չէն ուզում իրենց կողմից մարդիկ ուղարկել, ասուելով, թէ մինչև է մեր ընտրածները Դումա չեն ուղարկել այդ բանի անվերապահապէս չորս օր է ինչ գնացել է գլխաւորներին համարելու, որ պատգամաւորներ ընտրեն։

◆Դերբենդ Այտնեի գպրոցները եւ սասյան Կաթողիկոսի կամարկ և Շամախու Թեմի առաջնորդի գրութիւնը, որով առաջարկում են ամանակել մայիսի 7-ին ս. Էջմիածնում կայանալիք ժողովին Ուսուցչական խումբը և հոգաբարձութիւնը հետևյով գիտցին կաթողիկոսին և խնդրին նշանակել ընդհանուր հաւասար, գաղտնի ուղղակի ընտրութիւնով, իսկ եթէ այդ ինդրվքը չը յարգուի, որոշեց իրենց պատգամաւոր ուղարկել տեղիս ուսումնարանի առաջ ուսուցչ Արշակ Թադևոսեանցին, որը գնալով մայիսի 7-ի ժողովին պատճառաբանած «բօյկոտ» յայտնէ և վերադառնայ։

◆Դանձակ Սէբերկից փախած յայտնի աւազակ Սուէյման Մեհտի օղլին չարունակում է անարեկել տեղի Գանձակի գաւառը Նաթալիթէյի փերի տանուտէր Ջանդալիի տան վրայ յարձակելուց և նրան վիրաւորելուց յետոյ, նա ասկրի 22-ին վերսին եկաց նոյն տան դիւղում շրջապատած էր 20 ընկերներով։ Պաշտելով տանուտերով ընակարանը, նա ուժեղ հրացանաձգութիւն սկսեց, որպէս դի տանչ պաշարած բոլոր բնակիչներին անձնասուէր լինել, որից յետոյ նա տանուտէրը բոլորին բնաջինջ անել։ Ասալակ Սուէյմանին չը յաջողուց ի կատար ածել իր ժամադրութիւնը, որովհետև միւս Քուրք գիւղացիները այդ մասին իսոց տէրն Գանձակ քաղաքի իշխանութեան, որոնք իսկոյն այդ գիւղը կօգակներ ուղարկելուն Կօզակների մօտենալը տեսնելով աւազակները պրեցին տանուտերի տունը և փախուստի դիմեցին։

ՌՈՒՄԱՍՏԱՆ

◆Ամեն օր համարեա, Ներքին գործերի մինիստրութիւնը խնդրագիրներ է ստանում քաղաքներից, ուժեղացած դրութիւնը վերացնելու վերաբերմամբ։ «Р. А.»

◆Մահասն պատրի դէմ գրած բոլոր տակ ստորագրող քահանաների դէմ սկսած քննութիւնն արագ է ստանում և շատ մօտ ժամանակներում գործց վերաբերմամբ կայանալու է եկեղեցական դատարան։

◆Վարշաւայի բանտում գտարական բանտարկեալների սկսեցին յեղափոխական երգեր երգել։ պահապան դիւնապետերը կրակ բացին նրանց վրայ, սպանեան է մի քանի տարեկան։

◆Լիբլինսկի բանտից փախել են երկու քաղաական բանտարկեալներ. նրանց գտնելու համար քննութիւն է կատարուում։

◆Սարատովի բանտային ըէժիմը քաղաքական բանտարկեալների վերաբերմամբ օրէցօր վատթարանում է։

◆Ձնդումն այն տարեհան է հասել, որ բանտարկեալները արգելած է ծխել։

◆Որվէսդի մի բանտարկեալ իրաւունք ունեցաց ծխելու, պէտք է ընկերակիցն սպանաց բժշկից, իսկ այդ իրաւունքը պիտի վերանայ լիով բանտ կառավարչից։

◆Բանտարկեալների օգտագործ էին սկզբնական շաբաթ մի անգամ բաղնիս գնալու իրաւունք, այժմ միայն երկու շաբաթը մի անգամ են տանում։ «П. Кр.»

◆«Ж. К.» Քերի հաղորդում է, որ Սիվաստոպոլի բանտից փախել են 60-ի չափ մատրոսներ։

◆Հոգևոր սեմինարիաների աշակերտները որոնք աւարտել են չորս դասարան (առանց աստուածաբանական կուրսերի), Ներկայ սարայ աշնանը պրօֆեսօրների Ժողովի վճռի համաձայն, իրաւունք են ստանում մանկության համալսարանները իբրև իսկական ուսանողներ, որ ֆակուլտետ, որ նրանք ցանկանան։

(«Н. Ж.»)

◆Բէլօստոկ քաղաքը բալորվին յուզած գրութեան մէջ է, ամբողջ մինուրուց յեղափոխականած է. մի քանի օրւայ մէջ միայն քաղաքում երեք ուռմբ նետեցին, որոնք ուղեցին իրենց տեղը հետևանքները. ուսերի գոն գնացել յայտնի հրատարակ կլեղուս ատաղին մագազինը, գործատանատէր Ֆրէյդկինի մի ազգ և Բրեսկի տունն ամբողջովին քար ու քանդ է եղած։

Բուռը նետողները ոչ մէկը բռնած չէ։ Կան՝ ներքին Գործոների սկսել գործակիցներ անհետին է։ Ուղը գործատանտերերը գլուխորակ գեղմանգիը, վճռել են լիկվիդացիա անել իրենց գործերը և փոխադրել արտասահման։ («Р. А.»)

◆Պետերբուրգի հետագրական գործակալութեան տարեկան հրատարակութիւնը կրնում է, որ Մարտի Գօգրև գէմ ՀՀ նոր մեղադրանք է բարած, որով մեղադրում են նրան արտասահմանում յեղափոխական ագիտացիա մղելու համար։

◆Ներքին Նախարարութեան գործարանի բանտերը ներդրամասոյց նման կատարելագործութեան ոչ չիշատ գործարան արձագով իրենց գործերը նորա ներքում են նաև պետական գանձարանից փոխառութիւն 50,000 րուբլի 4%-ով, որ անհրաժեշտ է գործարանը կառավարելու համար իրբև սկզբնական դաշտ։ «Р. В.»

◆Վարշաւայի ժօտ գտնած Գետտո գիւղում, գանձ է տուրս պատահելու. գործարանն, կէս փութ դեհամիս, ծծմբային ըթքնաւոր կապարներ և պղինձներ։

Զերբակալեցին 13 հոգի։

Պրիվիսլինսկ հանապարհների վարչութեան մօտ տուրս պարիս. սպանած են 2 հոգի. ուսին հնարած անցամարտ Պալթեց նաև երկուղ ուսերը, որից ծանր կերպով վիրաւորեց Գրիվիսլինսկ հանապարհների հարզագնացութեան վարատրը։ («Գ. Ֆ.»)

◆Բէլօստոկում անարխիստները մի Քուրքի բաց Քոլեն, որի մէջ առաջերով սպառնալիքներ են ուղղած տեղական գործարատանտերերի մերձեան անդամներին։

Նրանցից մի քանիսը՝ Գինդլեր, Բրեսներ, Կամիրեան և ուրիշներ, փակցին իրենց գործատանները և փոխադրել են արդէն արտասահման։ Ժամանակաւորապէս գործատանները կը դադարեն գործելուց Ի միջի այլոց գանած է 3 բրաունիգի սարճանակ։

«Р. А.»

◆Վարշաւայի բոլոր այն բանուորները, որոնք ծառայում են քաղաքային վարչութեան պահակներից հինաւորդ մերձեան գործատանում արդէն ու պահանջում են առհիկների աւելացում և 8 ժամուայ աշխատանք։

◆«Р. Л.» կալեպգիրի անկարգութիւնների մասին հետևեալ մանրամասնութիւնները է հաղորդում.—վերապիների անարգ ամբոխ հաւաքուում է ոստիկանատան առաջ և պահանջում ազատել քանաարկեալ գերապետ Դեմիտրովին։

Ամբոխը յարձակուել ոստիկանատան հերթապահ պաշտօնեայի վրայ և սկսել քարկել նրան։ Ոստիկանատան պատասխանատուները ամբոխի վրայ հրացանները պարպելին. ամբոխը պատասխանել քարերով։ Դիւրացիները սպանած են 2-ը, վիրաւորած մի քանի հոգի։

Կարգը վերականգնելու համար՝ զօրքը վրայ հասաւ. գերապետները ցրեցին և ոչ ոք չի ձերբակալած։ «Р. А.»

◆Եկատերինոսլավի բանտում սպանուեց Բուտլեր անունով մի ուսանող, որովհետև հաւարձակուել էր գոռալ «Քող կորչի բանակատուիրը»։

«XX. В.»

ՄԱՄՈՒԼ

Նախանձելի չէ կազէտների գրութիւնը Դաւմայի վերաբերմամբ։ Անցաւ այն շրջանը, որտեղ նրանք կարող էին մի որև է գործնական քայլ անել, անցաւ ընտրական պայքարը, երբ նրանք կարող էին իրանց կոխ յայտարարել կառավարութեանը, ափսոսալ անել և բացարձակ ընտրական կռուով յաղթել կամ յաղթուել Այդ դէպքում նրանք ունէին կուլտուր միջոցներ. Նրանք և իրենց հանատկորները, որոնք մեծ մասամբ կառավարական կողմնակիցներ են, ընդհարուին մի գործնական ինդրի շուրջը, գործնական կռիվ մի միջոցներով Բայց անցաւ այդ շրջանը, և երբ այժմ հարկաւոր է մի որոշ դերը բռնել կառավարութեան վերաբերմամբ Դումայի սահմաններում, նրանք նոսած տեսան ինչպես, ինչպես ռակ ուա մելու...

Ի՜նչ անեն, իակապէս

Իրենք էլ չը գիտեն

Թերթերնէք նրանց մասուչը, լսեցէք նրանց ճառերը, և կը գտնէք տագար ու մի տեսակ վարանոտ կարծիքներ, բայց ոչ մի գրական ըստ գործնական տակտիկայի մասին։

Գաղաճարը մեկն է և շատ պարզ։

Գործնական տակտիկայի մասին ըստ կարող է լինել միայն այն տամանակ, երբ ձեռքի տակ գտնուին տիպերներ, որոնցով կարելի կը լինի տասչ տամեն այդ տակտիկան, իսկ այդ տիպերները կազմուելը միայն գտնուն տուրկ ևն։

Կառավարութեան հետ կռուելու համար՝ տանին մի կուսակցութեան պիտի ունենայ կօնկրետ այժ, որպիսին այս դէպքում հանդիսանում է ժողովրդական մասսան կարող ևն տակտիկ, կառնենալը իրենց տրամադրութեան տակ ուենենալ այդ ոյժը։

Ի հարկէ ոչ մտէլ են Նրանք մինչև այժմ Հ.Հ.Դ.Կ. Հ.Ս.Դ. Համաձեռնասէր են Նրա հետ մասնակցել համերգ են Նրան, որ իրենց գործունէութիւնը, Ձգումները այդպան համապատասխան են նրա շահերին, որ Նա կարող է և պատրաստ է նրանց հետ պետի գնալ պատահարել, ալեառել իրադործել այդ Ձգտումները։

Ա՛չ... Եւ հենց այդ է պատճառը — և այդ իրենք կազմակերը շատ լաւ են գիտէ,—որ նրանք ոչ ոքան վարանոտ, ոչ ոքան հետևողական են։ Այդ է պատճառը, որ նրանք չունեն մի որոշ լօզունգ որը կարող լինէր մեծերին էլ շրջելը այդ խայտաբղէտ կուսակցական բոլոր անգրանիների և տանդեր մի ընդհանուր, որոշ քաղաքականութիւն և տակտիկա։

Այդ է պատճառը, որ «ժողովրդական ազատութեան կուսակցութիւն» անունը չունենայ ոչ մի հիմք իրականութեան մէջ. մի տեսակ գիշերուայ հանդիսանում, կասակ Քուռ...

Այժմ էլ մի նոր յոյսի նշոյլ է երևացել կադետների շարքերում Ռուսկով մինիստրական կաբինետի փոփոխութեան մասին և գանելով, որ այդ չէ կարող ոչ մի նշանակութիւն ունենալ «Соврем.» ասում է։

Մեր հայացքները պիտի այլ կողմ դարձրած լինեն, մեր ամբողջ ուշադրութիւնը, բոլոր յոյսերը պիտի դարձնենք դէպի Դումայի ընդհանուր խմբերը մեր բոլոր ոյժերը պիտի ամեք այդ ընդհարպրութեան պայմաններին ինչպես Ռուսաստան, այնպէս էլ Նրանից դուրս, որովհետև այդ ընդհարպրութիւն է Ներկայ ամենամեծ մասկ լուրջ է կարելոր փակոցը հին բէժիմի դէմ յանուն լաւագոյն ապագայի մեղող կուի մէջ։

Արհեստական չնչառութեան տպատուհան են ծորնում այս յուսահատ, միանձնալիկ խօսքերը։

Ինչքան էլ ուժեղ լինի ընդդիմադիր կուսակցութիւնը Դումայում, նրա գործնական նշանակութիւնը միանգամայն չնչազորացած կը

լինի կառավարութեան դրական ուժի միջոցով։ Բայց այդ էլ բաւական չէ. միաժամանակ օպպօզիցիայի յոյսն էլ մի կողմ պիտի դնեն պ. պ. կադէտները, որովհետև, ինչպէս հաղորդեց հեռագիրը, ձախակողմեանների մի մասը, այն է՝ աշխատաւոր մասսաների ներկայացուցիչները մի առանձին խումբ են կազմել իրենց յատուկ ծրագրով. և կասկած չը կայ, որ այս խումբը բազմաթիւ խնդիրներում ընդդիմադիր կը հանդիսանայ հէնց իրենց՝ կադէտների վերաբերմամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ

Աշխատանքի տօնը կատարեց բոլոր քաղաքակիրթ երկրներում արժանավայել կերպով, առանց խոշոր յուզումների ու ընդհարումների։ Մայիսի 1-ը ամենից շատ երկիւղ էր ներշնչում Փրանսիայում։ Բուրժուազիան, յիշողէմ մօտալը հանդով զարկում էր ահակոչնակը և նախազգուշացնում էր հասարակութիւնը նոր «Կօմմունայի» սարսափների հանդէպ։

Մեծ գործադուլներն արդէն սարսափահար էին արել ժամանակակից կարգերի բոլոր փաստաբաններին։ Կլէմանսօին մեղադրում էին անդադար, թէ նա իբրև բուրժուա-սօցիալիստ, հովանաւորում է գործադուլ անող մասսաներին և իր ձեռնպահութեամբ խրախուսում է անկարգութիւններն ու արիւնհեղութիւնները։ Այդ ամբաստանութիւնների ազդեցութեան տակ՝ Կլէմանսօն արեց բանուորներին մի քանի լուրջ ազդարարութիւններ, որոնք նման էին սպառնալիքի։ Բանուորները հանդարտուեցին մի օֆիցեր սպանելուց և մի քանիսին վիրաւորելուց յետոյ։ Հարցը նորից խաղաղ լուծման ճանապարհի վրայ է և այն՝ անշուշտ շնորհիւ Կլէմանսօի տակտին, պաղարիւնութեան ու ժողովրդասիրութեան։ Լինէր Մելինը կամ նրա նման մի ուրիշը մինիստրութեան գլխին՝ անտարակոյս այդպիսի խոշոր, հսկայածաւալ գործադուլների միջոցին զօրքը չէր զլանայ «կատարել իր պարտքը» և գոնէ մի տասնեակ բանուորներ կընկնէին խառնութիւնների ժամանակ։ Իսկ այժմ և ոչ մի զոհ բանուորների կողմից։ Սա մի ուրախալի փաստ է և մի հաղուագիւտ, օրինակելի էպիզօդ։

Միւս կողմից՝ երևան եկաւ, որ բուն խռովարար տարրերը, որոնք այդ գործադուլների միջոցին ձգտում էին հրդեհ առաջացնել՝ քաջալերւում էին յետադէմ բանակի կողմից. նրանք կամ պարզապէս այդ վերջինի ագենտներն էին, կամ թէ անխիղճ մարդիկ, որոնք իրենց հաշիվներն ունէին՝ քաղաքացիական մի մեծ հրդեհ առաջացնելու մէջ։ Այսպէս թէ այնպէս՝ յետադէմների, արքայականների դաւադիր մասը խառն էր այդ գործում. մի անգամ ևս նրանք կամեցել էին ձուկ որսալ պղտոր ջրի մէջ։ Բայց դաւադրութիւնը դարձաւ վիժեց։ Կլէմանսօն հրամանեց մի շարք ձերբակալութիւններ. կասկածելի հակահանրապետականների շրջանից։

* * *

Անսովոր ծաւալով կատարեց Մայիսեան օրը Գերմանիայում։ Գործադուլը բառացի կերպով ընդհանուր էր. աշխատող չը կար։ Կառավարութիւնն էլ հրապարակ էր հանել անսովոր զինուորական ուժ։ «Սօցիալական մօտալուտ յեղափոխութեան» ստուերը՝ նրան ևս ըստ երևոյթին, անհանգիստ էր անում…

Ցուցած, նմանօրինակ տրամադրութիւն էր նաև սօցիալիստների շրջանում։ Նրանք ևս իրենց մամուլի մէջ յորդորում էին բանուորական լէգիօններին՝ կատարել իրենց հանդիսաւոր թափօրները առանց ընդհարումների ու պրօվօկացիաների, որպէսզի 1906-ի Մայիսեան մեծ օրը չը դառնար սգի օր… Եւ բանուորները յարգեցին իրենց առաջնորդների յորդորները։

Հոյակապ թափօրներ եղան նաև Գերմանիայում։ Այնտեղ օրւայ նշանաբանն էր՝ կռիւ ընտրողական իրաւունքի համար… Այդ կռիւը [illegible] չէ, սա տակաւին նոր է բորբոքւում։ Ընտրողական իրաւունքի դրօշը՝ դուրս էր կանչել ցոյցերի հրապարակ բանուորական անհամար մասսաներ,—մի հանգամանք, որ ինքնին արդէն գրաւական է ընտրողական պայքարի մօտալուտ յաղթանակի։

Աւստրիան յետ չը մնաց ընդհանուր խանդավառութիւնից։ Այնտեղ էլ կորտէժները սովորականից աւելի բազմամարդ էին և աշխոյժ։ Այնտեղ էլ Մայիսեան ցոյցը՝ ընտրողական իրաւունքի ցոյց էր…

Ամեն տեղ՝ բանուորական ուժերի հզօր, վեհափառ ծաւալում։ Եւ ամեն տեղ՝ մի կազդուրիչ շունչ, յեղափոխական,—սօցիական արդարութիւն։ Ռուսաստանի ճակատը հաղմըն է, որ տարածում է բոլոր երկրներում իր փրկարար զօրութիւնը և ամեն տեղ սարսափ ազդում ռէակցիային։ Ե

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, 22 ապրիլի

Թոյլ տուէք ձեր պատուական լրագրի միջոցով յայտնել անկեղծ շնորհակալութիւն հետևեալ յարգելի տիկիններին ու պարոններին, որոնք նուիրաբերեցին՝ աշակերտների մի կարևոր ու օգտակար գործի յաջողութեան, ինչպիսին է՝ ձրի գիշերային դասատախտակը տեղական Կարապետեան դպրոցի չքաւոր աշակերտներին։ Տ. ու. Զ. Մաֆսէնեանց 5 ռուբ., Մ. Բասխալեանց 5 ռ., Գ. Մելքոնեանց 5 ռ., Կամիլյեանց 3 ռ., պ. պ. Գ. Բայբուրդեանց 15 ռ., Կ. Մաղաքեանց 15 ռ., Վ. Աղաջանեան 10 ռ., Ս. Ստեփանեան 10 ռ., Մ. Կանդեան 5 ռ., Գ. Գասպարեան 5 ռ., Վ. Վիրաբեան 5 ռ., Ե. Միրաքեանց 5 ռ., Ա. Մնդոյեան 5 ռ., Մ. Թամրաշեանց 3 ռ. և Մ. Սաղաթէլեանց 3 ռ.։

Ընդհանուր գումարն է 99 րուբլի, որ և յանձնուած է տեղական ուսումնարանների հոգաբարձութեան նախագահ պ. Գր. Բուղուլեանին։

Ախալցխայի տղայոց Կարապետեան դպրոցի ուսուց-ուսուցիչ՝ Յովսէփ Թադէոսեանց

«ԿԱՅԾ»-Ի ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Թիֆլիս, 28 ապրիլի

Երէկ «Կայծ»-ի № 8 տպած էր Ադելխանօվի գործարանից մի տեղեկութիւն, իբր թէ դաշնակցականները չեն թոյլ տալիս «Կայծ» թերթը տարածելու բանուորների մէջ։ Որպէսզի ծանօթացնենք ընթերցողներին «Կայծ»-ի այդ նոր զրպարտութեան հետ, առաջ կը բերենք մեր գործարանում պատահած այդ միջադէպը, որից «Կայծ»-ը զրպարտութիւններ է թխում։

—Կարդալով «Յառաջ»-ում Բոլթայինից գրուած հերքումը «Կայծ»-ին, մենք դաշնակցական բանուորներս առաջարկեցինք կարդալ մեր ընկեր-բանուոր սօց.-դեմօկրատներին այդ հերքումը։—Մեր այդ առաջարկը առաջ բերեց մեր և նրանց մէջ վիճաբանութիւն։ Երբ վիճաբանութիւնը սուր կերպարանք ստացաւ, մեզանից մէկն ասաց—աւելի լաւ կը լինէր, քանի որ «Կայծ»-ը միայն զրպարտութիւններով է զբաղուած, կարդացէք ձեզ համար, և մեզ հանգիստ թողէք։

Ահա մեր այն խօսքերը, որը աղբիւր է ծառայել նոր զրպարտութեան թխելու դաշնակցականներիս դէմ։

Մի երկու խօսք էլ Ադելխանօվի սօցիալ-դեմօկրատ բանուորների մասին.—Թող նրանք, մի կողմ թողնելով իրենց «սօցիալիստութիւնը», գոնէ ըմբռնէին բանուորների շահերը և չաշխատէին ամեն կերպ օգնել գործարանատիրոջը աւելի մեծ չափով շահագործելու մեզ։

Սօցիալ-դեմօկրատ բանուորների նախաձեռնութեամբ մտցրել են կտորով աշխատանքի ձևը և այժմս մի կողմից առաջեայ բանող բանուորների թիւ կէսն է միայն բանում, իսկ միւս կողմից գործը չի բաւականանում եղած բանուորներին։

Եւ առաջին անգամ, երբ Ադելխանօվի վարչութիւնն առաջարկեց կտորով բանել, մենք բոլոր դաշնակցականներս հրաժարուեցինք, իսկ սօցիալ-դեմօկրատներն ուրախութեամբ ընդունեցին։

Լաւ կանէր «Կայծ»-ը եթէ «կրթէր» իր այդ բանուորներին սօցիալիստական գաղափարներով և ոչ զրպարտութիւններով։ Իսկ եթէ «Կայծ»-ի խղճուկ մաքի արտայայտութիւնը զրպարտութիւնից զէնը չի անցնում, նորից կրկնում ենք աւելի լաւ է հանգիստ թողէք մեզ ու ձեր բանուորներին և մի այլանդակէք աշխատաւորների մաքերը։

Ադելխանօվի «ձևի բաժանմունքի»՝
Դաշնակցական բանուորներ

«ԿԱՅԾ»-Ի ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ *)

II

Վերին-Ագուլիս, ապրիլի 21-ին

Ներկայ տողերիս գրողներս՝ Վերին-Ագուլեաց հայ հասարակութեան անդամներս կարդալով և կէտ առ կէտ նկատողութեան առնելով «Կայծ» օրաթերթի № 4-ում զետեղուած «Նամակ Ագուլիսից—Տխուր երևոյթներ» վերնագրով յօդուածը՝ որոշեցինք պատասխանել հետևեալը, զետեղելով դէմ դիմաց յօդուածագիր պ. Արսէնի այն մեղադրանքներին, որ նա յանիրաւի բարդում է հասարակութեան և Հ. Յ. Դաշնակցութեան հասցէին։

1. Զրպարտութիւն.—«Եթէ Ագուլիսը և շրջակայքը զերծ են մնացել ընդհարումներից և թալանումներից—«դա մասամբ կարելի է վերագրել տեղական թուրքերի աւելի գիտակից լինելուն»։

1. Պատասխան.—ա) Իբրև նմուշ այստեղի թուրքերի մէջ եղած գիտակցութեան, յիշեցնում ենք անցած տարւայ մայիսի 13-ի դէպքը, որին երևի «Կայծ»-ի յօդուածագիրը մօտից ծանօթ չէ։ Վանանդի և ուրիշ գիւղերի թուրքերը, Վ.-Ագուլեաց թուրքերի [illegible] խմբովին գալիս են Ագուլիսի վրայ՝ իրենց փայփայած «Ղըզըլ-Դարայի» ոսկիները գանձելու. Ագուլիսի տեղական թուրքերը գնում յետ են դարձնում դրանց… երբ լսում են, որ Օրդուբադից այդ րոպէին հնազանդ է պլիստանի կողմից, թէ 20 րոպէից Ագուլիս կը հասնի։ Յետ վերադարձող թուրքերը «գիտակցաբար» տանում են իրենց հետ ոսկիների փոխարէն՝ դաշտում արածող նախիրը։

բ) Եթէ յօդուածագրի ասելով մեր կոտորածից զերծ մնալու պատճառը «մասամբ» միայն թուրքերի գիտակցութիւնն էր (?), ապա մասա՞մբ ինչ բան էր,—եթէ ոչ այն, որ մեր ժողովուրդը ինքն էր զգացել ինքնապաշտպանութեան կարիքը։ Թող չը լինէր այդ հանգամանքը, և մեր գաւառն էլ կը վիճակւէր այն, ինչ որ վիճակւեցաւ ուրիշ գաւառներին։ Թող պ. յօդուածագիրը յիշէ Հանդամիջի դէպքը—մի նորահարսի անհետացումն ու երեք տղամարդու սպանութիւնը։

II. Զրպարտութիւն—«Ագուլիսի և շրջակայ հայերը ճիշտ է չենթարկւեցին հարևան թուրքերի կոտորածներին և թալանումներին, բայց մի ուրիշ ձևի տակ իրենց հարազատների ձեռքով «ազգասիրաբար» թալանի ենթարկւեցին»։

II. Պատասխան.—Ճիշտ է, մենք չենթարկւեցինք հարևան թուրքերի կոտորածներին և թալանումներին. բայց այն օրից, երբ եղան անձնազոհ մարդիկ, որ ամեն բան մոռացած՝ մտածեցին միայն մեր մասին և որոնք արժանի են մեր ջերմ յարգանքին ու երախտագիտութեանը, քանի որ նրանց ենք պարտական այս րոպէիս մեր գոյութիւնը։ Եթէ մեր հարազատները «ազգասիրաբար» թալանել են մեզ, թող պարոն յօդուածագիրը հրապարակաւ ցոյց տայ, թէ մեր թալանից քանի՞ կոպէկ մեր ո՞ր թալանող հարազատի գրպանն է մտել։

III. Զրպարտութիւն.—«Եթէ Թուրք-հայկական ընդհարումները պատահէին, գուցէ այդքան վնասներ չը կրէին»։

III. Պատասխան.—Ապա մեր պատիւը, մեր ազգային ու ընտանեկան դարևոր սրբութիւնները, մեր կուլտուրական առաջխաղացութեան կասեցումը, հարիւրաւոր անմեղների կեանքը… երևի այս բոլորը, որ հայ-թուրքական ընդհարումների դէպքում անխուսափելի կը լինէին, յօդուածագրի աչքում, շատ չնչին, շատ աննշան բաներ են, աւելի քան մեր իսկ ինքնապաշտպանութեան համար ծախսուած մի քանի կոպէկները։

IV. Զրպարտութիւն.—«Սպանդներ և ծեծեր»։

IV. Պատասխան.—Եթէ պատահել են այդ կարգի անախորժ դէպքեր, դրանք ունեն իրենց առանձին անհատական պատճառները և դրանց համար պատասխանատու են անհատները, իբրև անհատ և ոչ թէ մի ամբողջ կուսակցութիւն։

V. Զրպարտութիւն. — «Էկզեկուցիաներ» (?)…

V. Պատասխան.—Տես II կէտի պատասխանը։

Ուրեմն Արսէնի այս բոլոր զրպարտութիւններից ու չարախօսութիւններից յետոյ, որոնց մէջ ցոլում է միայն յօդուածագրի հոգին, մնում է մեզ վերջին անգամ կրկնել մեր զայրոյթը, արհամարհանքն ու միահամայն մեր ցաւակցութիւնը։

70 ստորագրութիւններ։

*) Տպագրելով այս երկու հերքումը, իբրև բնորոշիչ փաստեր սօցիալ-դեմօկրատական հայկական օրգանի անբարեխղճութեան, հարկաւոր ենք համարում նկատել հետևեալը.

«Կայծ»-ի բռնած ընթացքից արդէն երևում է, որ նա փողոցային թերթերի տակտիկային հետևելով, աշխատում է «սենսացիոն»—գրգռիչ լուրերով ու զրպարտութիւններով ընթերցողների ուշադրութիւնը գրաւել։ Անշուշտ նրան շատ ցանկալի կը լինի, որ մենք չարունակ բանակռիւ մղենք նրա դէմ և դրանով հետաքրքրութիւն զարթեցնենք դէպի նա. բայց այդպիսի պատիւ այլևս չենք արժանացնի նրան։ Եղած փաստերն արդէն բաւական են նրա բարոյական պատկերը ցոյց տալու համար։ Ընթերցողներին յայտնի է, թէ ինչպէս «Կայծը» հէնց առաջին համարից յետաշրջեց փաստերը «Դրօշակի» ու «Յառաջի» հակասութիւնները ցոյց տալու համար. իսկ երբ «Յառաջը» բաց արեց այդ սուտը, «Կայծը» լռութիւն պահպանեց։ Սուտ դուրս եկաւ նաև նրա «ընկերների» հաղորդած լուրը Բոլթայինից. սուտ ու զրպարտութիւն է նաև Ադելխանօվի բանուորների մասին գրածը, նաև Ագուլիսի թղթակցութիւնը և միւսները։ Այնպէս որ այդպիսի հարցերի մասին վիճել—կը նշանակէ չարունակ սուտեր ու զրպարտութիւններ հերքելով զբաղւել, ուստի և մինչև այժմ առաջ բերած նմուշները բաւական համարելով, մենք ընդմիշտ փակում ենք այդպիսի բանակռիւը։ Թող յայտնեն «Կայծ» կարդացողները միշտ աչքի առաջ ունենան նրա բարոյական պատկերը և ըստ այնմ գնահատեն հաղորդած տեղեկութիւնները թէ Դաշնակցութեան և թէ հայկական կեանքի միւս երևոյթների մասին։

Խմբ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետերբուրգի գործակալութիւն)

—

27 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստր նշանակւում է Կոկօվցեվ, ներքին գործերի մինիստր՝ Ստոլիպին և Սինոդի գլխաւոր պրոկուրոր՝ Շիրինսկի—Շիխմատով։—Հրատարակուած է Պետական Խորհրդի նշանակովի անդամների ցուցակը, որոնք մասնակցելու են Խորհրդի նիստերին։ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ նշանակուած է Խորհրդի պատուաւոր նախագահ, կոմս Սօլսկի նախագահ, իսկ ստատս-սեկրետար Ֆրիշ՝ փոխ-նախագահ։ — Այսօր Մարիինսկի պալատում Պետական Խորհրդի անդամներին հրաւիրել էին բաւալ, որ այդպիսով հնարաւորութիւն տրւի ընտրովի անդամներին ծանօթանալու նշանակովի անդամների հետ։ Մայրաքաղաքը այսօր զարդարուած է դրօշակներով։ Տրամադրութիւնն ամենուրեք տօնական է։ Եղանակը հրաշալի է։ Թերթերը լի են հանդիսաւոր յօդուածներով, որոնք նկարագրում են պատմական մոմենտի ամբողջ հմայքը։ Յայտնի երաժշտագէտ Գլազունօվը գրել է հիմն ուղղած «Ժողովրդական ներկայացուցիչներին», որը յարմարեցուած է այսօրւան հանդէսներում, բանկերում և պետական հիմնարկութիւններում պարապմունքները դադարեցուած են։ Քաղաքում տիրում է անսովոր շարժում։ Պատահող կառքերը իրար ձեռքից խլւում են։

ՕԴԵՍՍԱ։ Համալսարանի խորհուրդը Պետական Դումային ուղղում է հետևեալ հեռագիրը՝ «Տածելով այն խորին համոզմունքը, որ ազատ պետութեան մէջ միայն կարող է գոյութիւն ունենալ ազատ համալսարանը՝ Օդեսսայի համալսարանի խորհուրդը ողջունում է Դումայի բացումը, որպէս առաջին քայլ ստեղծելու ազատ խոստ—սահմանադրական պարլամենտական ռամկավարական պետական կազմ։ Այս մեծ նպատակին հասնելու համար Դումայի առաջ դրուած է ծանր պայքարի և փորձանքների հեռանկարը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երէկ քաղաք հասան Դումայի մօտ 100 անդամներ։ Դումայի բացման ներկայ կը լինեն մօտ 400 անդամներ։—Դումայի այն անդամները, որոնք ընտրուած են ազգաբնակութեան լայն աշխատաւոր խաւերի կողմից՝ գլխաւորապէս գիւղացիների և բանուորների, կազմեցին կուսակցութիւն «պարլամենտական աշխատաւոր գրուպպա» անուան տակ և մշակեցին իրենց սկզբունքային ծրագիրը։—Պետական Խորհրդի առաջին նիստը կայանալու է ապրիլի 28-ին, ազնուականների ժողովարանում։ Նշանակովի անդամների թիւը 90—է։ Ցուցակի մէջ չէ մտցրած կոմս Վիտտէի անունը, նոյնպէս այն զառամեալ անդամների անունները, որոնք բացակայում են և հիւանդ են։

ԼՈՆԴՈՆ։ Դումայի բացման պատմական օրի առթիւ, թերթերից շատերը Ռուսաստանին նուիրում են համակրական յօդուածներ, յայտնելով, որ Ռուսաստանի բարեկեցութիւնը կարևորագոյն գործօններից մէկն է ընդհանուր խաղաղութեան պահպանման։

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ։ Սիմֆերօպօլի քաղաքային խորհուրդը ողջունելով Դումայի բացումը՝ յայտնում է իր վստահութիւնը, որ Դումայի անդամները անխախտ կերպով կը կատարեն իրենց պարտականութիւնը հայրենիքի առաջ և կապահովեն ժողովրդին քաղաքացիական և քաղաքական ազատութիւնը։

ՍԻՄԲԻՐՍԿ։ Քաղաքային խորհուրդը Պետական Դումային ուղղած ողջոյնի հեռագրի մէջ ասում է, որ ժողովուրդը հաւատում է, թէ իր ընտրեալները կը կատարեն իրենց ուղարկողների կամքը և առնչուած հայրենիքին կը տան խաղաղութիւն։ Ժողովրդի և իշխանաւորների մէջ եղած տարաձայնութիւնը և ռուսական կեանքի ամբողջ զարգացման անկազմակերպ դրութիւնը հասել են այն աստիճանին, որ վտանգ կայ նոյն իսկ հայրենիքի ոչնչացման։ Այսպիսի ծանր օրերին ժողովրդի ընտրեալները միայն կարող են կարգաւորել հայրենիքի վիճակը, ընտրեալներ, որոնք անխախտ և անվախ կը յայտնագործեն Ռուսական երկրի կամքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առաւօտեան ժամը 10-ին, զանգակների միահամուռ ղօղանջը ազդարարեց մեծ հանդէսի մասին։ Եկեղեցիներում կատարւում են մաղթանքներ։ Օրը հրաշալի է, պայծառ։ Ձմեռային պալատի մօտ գտնւող փողոցներում տիրում է կենդանութիւն։ Նևսկի պրօսպեկտում և Մօրսկայա փողոցում շրջում են բազմաթիւ մարդիկ. խանութները փակ են, տները զարդարուած դրօշակներով։ Ամենուրեք շրջում են ոստիկանական և զինուորական պահակախմբեր։ Տրամը չէ աշխատում։ Օրը անցաւ առանց միջադէպի։ Տաւրիկեան պալատի մօտ գումարուած բազմաթիւ ամբոխը Դումայի անդամներ Պետրունկևիչին և Բօդիչևին ընդունեց ամպերի և ուրախ բացականչութիւններով։ Պատգամաւորները պատասխանեցին համերաշխ բացականչութեամբ՝ «կեցցէ ազատութիւնը»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ (Պաշտօնական)։ Ապրիլի 27-ին Ձմեռային պալատում նոր օրէնսդրական հիմնարկութիւնների բացման առթիւ, տեղի ունեցաւ Բարձրագոյն այցելութիւն։ Գեօրգիևսկի դահլիճում կայացած հանդիսաւոր մաղթանքից յետոյ, որին ներկայ էին Նորա Կայսերական Մեծութիւնները, Կայսերական տան անդամները, Պետական Խորհրդի, Պետական Դումայի և Կառավարիչ Սենատի անդամները և Կայսրութեան բարձրագոյն պաշտօնեաները, Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց Պետական Խորհրդին և Պետական Դումային ուղղել ողջոյնի հետևեալ խօսքերը. «Վերին նախախնամութեամբ Ինձ յանձնուած է հոգս հայրենիքի բարեկեցութեան մասին։ Այդ հանգամանքը հարկադրեց Ինձ ժողովրդի ընտրողներին հրաւիրել աջակցելու օրէնսդրական խնդիրներում։ Վառ հաւատ տածելով Ռուսաստանի պայծառ ապագային, Ես ի դիմաց ձեզ, ողջունում եմ այն լաւագոյն մարդկանց, որոնց Իմ սիրեցեալ հպատակները Իմ հրամանով ընտրել են։ Ձեր առաջ դրուած է դժուարին և բարդ աշխատանք։ Հաւատում եմ, որ սէրը դէպի հայրենիքը և ջերմագին ցանկութիւնը ծառայելու հայրենիքին՝ ձեզ կը ոգևորի և կը միացնի, իսկ Ես անխախտ կը պահպանեմ այն օրէնքները, որոնք Ես շնորհել եմ, հաստատապէս համոզուած լինելով, որ դուք ձեր բոլոր ուժերը անձնուիրութեամբ կը նուիրէք հայրենիքի ծառայութեան և կը պարզէք Իմ սրտին այնքան մօտիկ գիւղացիութեան պէտքերը, ժողովրդի լուսաւորութեան և բարեկեցութեան հարցերը, յիշելով որ պետութեան հոգեկան վեհութեան և բարեկեցութեան համար անհրաժեշտ է ոչ թէ միայն ազատութիւնը, անհրաժեշտ է նոյնպէս կարգ ու կանոն, հիմնուած իրաւունքի վրայ։ Թող որ կատարուեն Իմ ջերմագին ցանկութիւնները՝ տեսնել Իմ ժողովուրդը բախտաւոր և յանձնել որդուս որպէս ժառանգութիւն ուժեղ, բարեկեցիկ և լուսաւոր մի պետութիւն։ Թող որ Աստուած օրհնէ այն աշխատանքները, որ Ես Պետական Խորհրդի և Պետական Դումայի հետ միասին կատարելու եմ և թող որ այս օրւայ օրը նշանաւոր լինի, որպէս օր Ռուսական Երկրի բարոյական վերանորոգման, օր վերածնութեան նրա լաւագոյն ուժերի։ Երկիւղածութեամբ ձեռնարկեցէք աշխատանքին, որի համար Ես ձեզ հրաւիրեցի և արժանաւոր կերպով արդարացրէք հաւատարմութիւնը դէպի Ցարը և ժողովուրդը։ Աստուած ձեզ օգնական։ Թագաւորական ողջոյնին հետևեց միահամուռ, երկար տևող, ուժեղ «ուռա»։ Պրէօբրաժենսկի գնդի զինուորական երաժշտախումբը մի քանի անգամ կրկնեց ժողովրդական հիմնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մաղթանքից յետոյ, ժամը 5-ին Դումայի պատգամաւորները հաւաքւեցին ժողովադահլիճում։ Նախագահի ամբիոնի վրայ բարձրացաւ ստատս—սեկրետար Ֆրիշ և ի կատարումն Կայսր կամքի՝ յայտարարեց նիստը բացուած՝ ողջունեց Դումայի անդամներին, ապա առաջարկեց ստորագրել այն հանդիսաւոր խոստումը, որի մասին յիշուած է Դումայի կանոնադրութեան 31-րդ յօդուածում։ Ստորագրելու գործողութիւնը վերջացնելուց յետոյ, Ֆրիշը առաջարկեց ընտրել Դումայի նախագահ։ Երդւեալ-հաւատարմատար Մուրոմցևը ստացաւ 426 ձայն։ Ընտրութիւնն ընդունեց միահամուռ ծափահարութիւններով։ Պետրունկևիչ արտասանեց ողջոյնի ճառ, որին Մուրոմցևը պատասխանեց նոյնպէս ճառով, ապա կոչ արեց մարդկանց և Դումայի անդամներին առաջարկեց հեռանալ դահլիճից։ Որանից յետոյ Մուրոմցևը նիստը յայտարարեց փակուած։ Յետագայ նիստը կայանալու է չորեք օր, առաւօտեան ժամը 11-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետրունկևիչն իր ճառում ասաց. «Պատւի պարտաճանաչութիւնը, մեր խղճի պարտաճանաչութիւնը հրամայում է, որ մեր առաջին միտքը, մեր առաջին ազատ խօսքը նուիրենք նրանց, ովքեր զոհել են իրենց ազատութիւնը բոլորիս համար թանգագին հայրենիքը ազատելու։ Երկրի բոլոր բանտերը լեցուն են, հազարաւոր ձեռքեր մեկնած են դէպի մեզ յոյսերով և աղերսանքներով։ Կարծում եմ, որ մեր խղճի պարտաճանաչութիւնը հարկադրում է մեզ գործ դնել բոլոր ջանքերը, որոնք հնարաւոր են մեր այս կացութեան մէջ, որ Ռուսաստանի ձեռքով գնված ազատութիւնը ոչ մի զոհ այլևս չը վերցնի»։ Եզրափակելով խօսքը ճառախօսը նկատեց «Թէև այժմս այդ հարցը քննելու չէ, որովհետև նա կը ընկնի այն ժամանակ, երբ կը պատասխանենք Թագաւորի Գահական ճառին, այնուամենայնիւ այժմս մենք չենք կարող զսպել մեր սրտի աղաղակը, չենք կարող զսպել մեզ չասելու, որ ազատ Ռուսաստանը պահանջում է ազատելու բոլոր վնասուածներին»։ Ճառը ծածկեց խլացուցիչ ծափահարութիւններով։ Մուրոմցեվ իրեն նախագահ ընտրելու համար Դումային յայտնեց խորին շնորհակալութիւն։ «Ժողովրդի կամքը, ասաց Մուրոմցևը, յայտնուած է առանց աւելի կանոնաւոր և աւելի մշտական արտայայտութիւն, որը գործելու է անկապտելի օրէնքների և օրէնսդրական հիմնարկութիւնների հիման վրայ և յուսով է, որ աշխատանքը կընթանայ սահմանադրական միապետի իրաւունքները ըստ պատշաճի յարգելու և կառավարութիւնը լիակատար կերպով վերանորոգելու հիմքի վրայ»։

Խմբագիր-Հրատարակիչ՝
Բժ. ՏԻԳ. ԹԱԴԷՒՈՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Բուդաղօվի № 7 պօդիէզդ նոտար Միրզոյեանի։
Նոյնպէս պատւաստում է ծաղիկը։
(չ. ո. 4.) 1—96

Տպագրւում է և շուտով լոյս կը տեսնի

ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

հետևեալ բովանդակութեամբ.

1. Սեռական գիտելիքների անհրաժեշտութիւնը
2. Գիտելիքներ սեռական կեանքի մասին.
3. Սեռական գործարանները.
4. Սեռական կեանքի գործողութիւնները.—
   ա) Երազախաբութիւն.
   բ) Դաշտան.
   գ) Սեռական յարաբերութիւն.
   դ) Յղութիւն.
   ե) Ծննդաբերութիւն.
5. Յաւելուած.—Երեխայի խնամատարութիւնը.

Կազմեց Աշտար

Գինն է 20 կոպ. Դիմել՝ Тифлисъ, Дворцовая ул. Т-[Д.] Н. Бозарджіанцъ съ С-ми Геворку Бабурянцъ.
Հրատարակիչ՝ Գ. Բաբուրեանց
166.

ՀՐԱՒԷՐ

Պատիւ ունիմ խնդրելու ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու ծխականներին, շնորհ բերել եկեղեցի ընդհանուր ժողովի, որ կայանալու է ամսիս 30-ին, կիրակի, առաւօտեան 11 ժամին, 1) ընտրելու հաշուեքննիչներ տարեկան հաշիւները քննելու համար և 2) խորհրդակցելու՝ դպրոցի, պառապ շինելու, Թաղական հոգաբարձութեան հիմնելու մասին և այլն։
Երէցփոխ Գ. Բաբուրեանց
165. 2—1

ՀՐԱՒԷՐ

Ապրիլի 30-ին, կիրակի ժամը 12-ին, վանքի տաղ եկեղեցու ծխականները հրաւիրւում են ժողովի, իրենց միջից մի ներկայացուցիչ ընտրելու, որ միւս եկեղեցեաց ներկայացուցիչների հետ, ընտրեն եկեղեցից 4 պատգամաւոր խորհրդարար հայ-Թեմական ժամանակաւոր մասնակցելու, որ լինելու է զինուորական նահանգի [illegible] մօտ։
Դեկան ա. քահ. Տէրաղեանց

ԾԱԽՈՒՄ Է

Առաջնակարգ համարներ—հիւրանոց. քաղաքի կենտրոնում։
Դիմել Ներսիսեան փողոց, № 20 կանանց հագուստեղէնի խանութում—Վասօ Գեօզալեանին 1—2

Տպարան Քութաթելաձէի
Скоропечатня Ар. В. Кутателадзе, Фрейлинск. ул., № 13